

3

դասարան

ԵՍ ԵՎ ՆՐՁԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՋՍԱՆՅԱՆ
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

3

դասարան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ



«ԱՄՏՐԻԿ ԳՐԱՏՈՐ»
ԳՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 373.167.1:93/99:502(075)
ԳՄԴ 63.3+20.1 y72
Ա 296

Դասագիրքը հաստատված է Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարության կողմից:

ԼՈՒՄԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Ա 296 Ես և շրջակա աշխարհը: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի
դասագիրք.-Եր. «Աստղիկ գրատուն», 2008.-160 էջ:



ԳՄԴ 63.3+20.1 y72

ISBN 978-99941-76-26-4

© «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, 2008
Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԴԱՍ

ԵՍ ՄԵՆԱԿ ԶԵՍ



1. Լսե՛ք հեքիաթը և պատասխանե՛ք հարցերին:

ՊԵՏԻԿԸ ՄԵՆԱԿ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Պետիկը արթնացավ ու մտածեց, որ երևի դեռ շատ վաղ է շուրջը լռություն էր: Վազեց խոհանոց, հետո՝ ճաշասենյակ. այ քեզ բա՛ն, ու՞ր են հայրիկն ու մայրիկը: Ոչ ոք չկար՝ Պետիկը մենակ էր բնակարանում: Նա շատ ուրախացավ. հիմա ինչ կուզի՝ կանի, չէ՞ որ մենակ է, ո՞վ պիտի վրան բարկանա: Արագ լվացվեց, հագնվեց և վազեց փողոց: Փողոցն էլ էր դատարկ. մեքենաները չէին շարժվում, խանութներում ոչ ոք չկար, անցորդներ էլ չկային: Տեսնես ու՞ր են կորել մարդիկ: Միայն Պետիկն էր մնացել ամբողջ աշխարհում: Հրուշակեղենի խանութում նա գրպանները շոկոլադե լցրեց: Իհարկե, գիտեր, որ այդպես չի կարելի, բայց չէ՞ որ մենակ էր՝ ինչ կուզեր՝ կաներ:

Համենայն դեպս, հետաքրքիր է՝ ու՞ր են կորել մարդիկ:

Փողոցի անկյունում տրամվայ էր կանգնած: Պետիկը բարձրացավ ու նստեց վագոնավարի տեղում: Զրը՛նգ. տրամվայն աղմուկով պոկվեց տեղից ու սրընթաց սլանալով...մխրճվեց նույն գծի վրա կանգնած մի ուրիշ տրամվայի մեջ՝ թրախկ: Պետիկը գլուխկոնձի տվեց ու ընկավ ուղիղ սալահատակին...իսկ տրամվայը ջարդուփշուր եղավ, բայց ի՞նչ հոգ. փողոցը լիքն էր տրամվայներով:

Պետիկը մի բաց դուռ տեսավ ու ներս մտավ. բանկ էր, ուր մարդիկ իրենց դրամն են պահում: Մի պարկ դրամ վերցրեց.



ուռա՛, հիմա ինչ կուզի՝ կգնի: Բայց խանութներում ոչ վաճառող կար, ոչ գանձապահ, և Պետիկը ոչինչ էլ չէր կարող գնել... Նա զայրույթից դրամը շաղ տվեց փողոցում...

Մտավ կինոթատրոն, ու նրանից ոչ ոք տոմս չպահանջեց: Բայց ո՞վ պիտի կինո ցույց տար, չէ՞ որ Պետիկից բացի ոչ ոք չկար... Պետիկն զգաց, որ սոված է: Մտավ ճաշարան և փորձեց ինքն իր համար ճաշ եփել, բայց ապուրը շատ անհամ ստացվեց:



Մանկական հրապարակում կանգնած էին ճոճանակները, բայց ճոճվելու համար մի հոգի էլ էր հարկավոր, իսկ Պետիկը մենակ էր... Բանից պարզվում է, որ այնքան էլ հաճելի չէ աշխարհում մենակ լինելը: Պետիկը հանկարծ սաստիկ կարոտեց ընկերներին, հայրիկին ու մայրիկին... լաց եղավ... ու արթնացավ: Մեկ էլ ներս մտավ մայրիկը:

- Վա՛յ, մայրիկ ջան, երազումս տեսել էի, որ մենակ եմ մնացել աշխարհում: Ինչ ուզեմայի՝ կարող էի անել, բայց այնքա՛ն տխուր էր մենակ: Լավ է, որ երազ էր...

Քիչ անց նա արդեն բակում էր: Որքա՛ն լավ է խաղալ ընկերների հետ:





- Երբևէ ցանկացե՞լ եք մենակ լինել: Ինչու՞:
- Ինչու՞ է դժվար միշտ մենակ լինելը. ինչու՞ են մարդիկ իրար պետք:
- Ինչե՞ր կանեիք, եթե մենակ լինեիք և ի՞նչը չեք կարող մենակ անել:

2. Տեսրու՜մ լրացրու՛ թերթիկը՝ նկարագրելով ընկերներիցդ մեկին:

Իմ ընկերը

Անունը _____ է:

Սիրում է _____:

Չի սիրում _____:

Մենք լավ ընկերներ ենք, որովհետև _____:

Ինձ ամենաշատը դուր է գալիս, որ նա _____ է:



ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բոլորս էլ ուզում ենք ընկերներ ունենալ՝ ընկերանալ: Ընկերանում ենք, երբ միասին խաղում կամ աշխատում ենք, նույն բաներով ենք հետաքրքրվում, երբ մեզ դուր է գալիս միասին լինելը: Ընկերներից նոր բաներ ենք սովորում, իրենք էլ մեզանից են սովորում: Օգնում ենք իրար, տխրում և ուրախանում ենք միասին:





3. Բաժանվե՛ք խմբերի և նստե՛ք շրջանով:

- Մեկ թուղթ վերցրեք:
- Խմբից մեկը թող թղթի վերին տողում գրի որևէ հատկանիշ, որ կարևորում է իր ընկերոջ մեջ, ապա թուղթը վերևից այնպես ծալի, որ գրածը չերևա և փոխանցի կողքինին:
- Նա էլ իր հերթին պետք է ի՛ր ընկերոջ որևէ դրական հատկանիշ գրի և դարձյալ թուղթը վերևից ծալելով՝ փոխանցի հաջորդին:
- Այսպես բոլորդ մեկական դրական հատկանիշ գրեք, **որն ընկերության համար կարևոր էք համարում:**




Ձեր թվարկած հատկանիշները ներկայացրե՛ք դասարանին:

- Ո՞վ ունի ձեր թվարկած հատկանիշներից: Ասե՛ք անունները:
- Ովքե՞ր կարող են ունենալ ընկերության համար կարևոր այդ հատկանիշները.
 - միայն աղջիկնե՞րը,
 - միայն տղանե՞րը,
 - թե՞ բոլորը:





4. Տեսրում գծերով միացնելով՝
ցույց տվե՛ք, թե շրջապատում
ապրող մարդկանցից ո՞վ ում
կարիքն ունի և ինչի՞ համար:



Ո՞վ ինչպես է՝օգնում մարդկանց: Տեսրում
լրացրե՛ք և շարունակե՛ք:

Օրինակ՝ Բժիշկը բուժում է, երբ հիվանդանում ենք:

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



Տեսրում լրացրե՛ք.

Ինչե՞ր կանեիք, եթե մենակ լինեիք	Ի՞նչը չենք կարող մենակ անել





1.

Բաժանվե՛ք խմբերի: Կարդացե՛ք հեքիաթը, ապա փորձե՛ք ավարտ հորինել:

ՄՈՌԱՅՎԱԾ ԽՈՍՏՈՒՄ

Լինում է, չի լինում, մի արքայադուստր է լինում: Մի օր գնում է անտառ զբոսանքի և այնքան է տարվում ծաղիկներ հավաքելով, որ չի նկատում, թե ինչպես է մոլորվում: Նստում է կոճղին ու լաց է լինում: Աղքկա լացը լսելով՝ մի օձ է սողալով մոտենում: Մխիթարում է նրան ու խոստանում, որ կօգնի՝ ճանապարհը ցույց կտա, եթե նա էլ խոստանա ընկերանալ իր հետ. ախր, ինքը շատ միայնակ էր՝ ոչ ոք չէր ուզում իր հետ ընկերություն անել:

«Քո հավատարիմ, անբաժան ընկերը կլինեմ», - խոստանում է աղքիկը:

Բայց հեռվում պալատը տեսնում է թե չէ, վազում-հեռանում է՝ օձին մենակ թողնելով: Նույնիսկ շնորհակալություն չի ասում: Շուտով օձի մասին բոլորովին մոռանում է:



Օրերից մի օր պալատում իրարանցում է սկսվում՝ ինչ-որ մեկը ներսում օձ էր տեսել: Մարդիկ խուճապահար սկսում են փախչել պալատից, իսկ թագավորը կարգադրում է բռնել ու սպանել օձին...





- Արքայադստեր արարքը ձեզ դուր եկա՞վ: Ինչու՞:
- Արքայադուստրն օձի համար լա՞վ ընկեր էր: Իսկ օձը: Բացատրե՛ք:
- Ձեր հորինած ավարտները հավանեցի՞ք: Ինչու՞:
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ է ընկերությունը:

2. Ի՞նչ ես կարծում՝ ո՞վ է իսկական ընկեր: Ցանկից ընտրիր հինգ հատկանիշ, որ կուզեիր ունենալ ընկերդ.

- ով միշտ կատարում է քո խնդրանքը,
- ում վրա միշտ կարող ես հույս դնել,
- ում հետ միասին հաճելի է,
- ով կատարում է իր խոստումները,
- ով ուզում է, որ միշտ իր ասածով լինի,
- ով քո կարծիքով ամենաուժեղն է,
- ով միշտ համաձայն է քեզ հետ,
- ով պատրաստ է ունեցածը կիսել քեզ հետ,
- ով քեզ շիտակ կապի, եթե քեզ լավ չես պահում,
- ով քո կարծիքով ամենագեղեցիկն է,
- ով կշարունակի ընկերդ մնալ, նույնիսկ եթե նույն բանի մասին տարբեր կարծիքներ ունեք,
- ով բոլորին դուր է գալիս:





3. Կարդացե՛ք իրավիճակները և արտահայտե՛ք ձեր կարծիքը.

1. Սարգիսը կարծում է, որ եթե ընկերը նկատել է ընկերոջ սխալը, պետք է լռի այդ մասին՝ չասի իր կարծիքը: Դու՞ք ինչ եք կարծում:

2. Ժիրայրենք ընտանիքով սեղանի խաղ են խաղում: Ժիրայրի քաշած քարտն ասում է՝ «մի հերթ բաց թող», բայց Ժիրայրը կարդում է՝ «մի անգամ էլ զառ գցիր»: Քույրը նկատում է և Ժիրայրին ստախոս է անվանում: Դի՞շտ է վարվում:

3. Սաթենիկը պատմության ստուգողականին լավ էր պատրաստվել, բայց երկու տարեթիվ մոռացել է ու չի գրել: Ուսուցչուհին նրա ընկերուհու՝ Գոհարիկի մայրիկն է, իսկ տետրերը մայրիկի դարակում են: Գոհարիկն ի՞նչ պիտի անի:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Հարցուփորձ արեք հայրիկին, մայրիկին, տատիկ-պապիկներին կամ հորաքույր-մորաքույրներին, թե ով է մինչ այժմ ընկերություն անում մանկության ընկերոջ հետ, որին ճանաչում է այն ժամանակից, երբ ձեր տարիքին էր:
- Միասին փորձե՛ք նկարագրել, թե ինչպիսի ընկեր է նա:





1. Լսե՛ք հեքիաթը և պատասխանե՛ք հարցերին:

ՓԱՓԼԻԿՍՍԱՆ

Յոթ սարից այն կողմ մի փոքրիկ հեքիաթային երկիր կար՝ Փափլիկստան: Փափլիկստանի բնակիչները տաքուկ-փափլիկներ ունեին: Հենց որ տխրում կամ վատառողջ էին լինում, տաքուկ-փափլիկը ծեռքն էին առնում ու առողջանում, նորից երջանիկ էին դառնում: Բավական էր մոտենալ պատահական անցորդի և խնդրել. «Ներեցե՛ք, ինձ մի տաքուկ-փափլիկ չե՞ի՞ք տա», և դիմացինը հաճույքով տալիս էր:



Բայց մի օր չար վիուկը կախարդում է փափլիկստանցիներին: Մարդիկ դառնում են սառը, եսասեր ու չար և ափսոսում են տաքուկ-փափլիկները միմյանց տալ: Դրանից տաքուկ-փափլիկները կծկվում, չորանում ու սառը-փշոտներ են դառնում:



Հայտնի չէ, թե փափլիկատանցիների վերջն ինչ կլինեն, եթե բարի փերին օգնության չհասներ: Նա ընկերանում է երեխաների հետ և նրանց սովորեցնում է նորից տաքուկ-փափլիկները բաժանել: Շուտով կախարդանքը վերանում է, և Փափլիկատանում կյանքն էլի անհոգ ու երջանիկ է դառնում, իսկ մարդիկ հասկանում են չար վիուկի նենգությունն ու նրան դուրս են վռնդում իրենց երկրից:



- Ձեր կարծիքով ի՞նչ է տաքուկ-փափլիկը:
- Ձեր ընտանիքում միմյանց տաքուկ-փափլիկներ բաժանու՞մ եք:
- Ուզու՞մ եք մեր երկիրն էլ «Փափլիկատանի» պես դարձնել: Ինչպե՞ս կարելի է դա անել:

2. Կարդա՛ և կատարի՛ր առաջադրանքը:

- 1) Թղթի վրա մատիտով ուրվագծիր ձեռքիդ 2 ափերը, մկրատով կտրիր:
- 2) Մեկի վրա գրիր քո անունը, իսկ մյուսին՝ այն դասընկերոջ, ով երբևէ օգնել է քեզ:
- 3) Ափերն իրար միացրու ծափ տալու պես՝ որ անունները մնան ներսի կողմում:
- 4) Դրսի կողմից գրիր, թե ընկերդ ինչով է օգնել, օրինակ՝ «Ինձ օգնել է մաթեմատիկայի խնդիրը լուծել»:

Շրջելով ծանոթացիր մյուսների աշխատանքներին՝ ով ում ինչպես է օգնել:





- Ի՞նչ եք զգում, երբ ձեզ օգնում են:
- Ի՞նչ եք զգում, երբ դուք եք օգնում:



3. Կազմե՛ք երեք հոգանոց խմբեր:

- Վերցրեք մեկ նկարելու թուղթ և որոշեք, թե ինչ եք նկարելու:
- Միաժամանակ սկսեք նկարել՝ յուրաքանչյուրդ օգտագործելով թղթի մի մասը, բայց այնպես, որ արդյունքում ստանաք մախօրոք որոշած ամբողջական պատկերը:



- Հե՞շտ էր միասին աշխատելը: Ի՞նչն էր դժվարացնում աշխատանքը, ի՞նչն էր օգնում միասին աշխատելուն:
- Ի՞նչ առավելություն ունի մենակ աշխատելը:
- Ի՞նչ առավելություն ունի ընկերովի աշխատելը:
- Ո՞ր դեպքում է ընկերովի աշխատելն օգնում:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔ

Մտածի՛ր և թվարկի՛ր, թե որ դեպքերում ձեր ընկերոջդ տաքուկ-փափլիկ կառաջարկեիր:





1. Լսե՛ք հեքիաթը և պատասխանե՛ք հարցերին.

ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ ՈՒ ԶՈՒՐԸ ՊՅԻՐ

Մի անգամ մի ձկնորս ծուկ է բռնում, տալիս է իր շալակտարին, որ պահի: Մեկ էլ ծուկը լեզու է առնում.

- Ա՛յ բարի մարդ, - ասում է, - հիմա, ո՞վ գիտի, ծնողներս ինձ են որոնում, ընկերներս տխրել են, ես էլ, տե՛ս, ջրից դուրս տանջվում եմ, շունչս կտրվում է: Ի՞նչ կլինի, խղճա ինձ, բաց թող՝ գնամ...

Շալակտարի մեղքը գալիս է, ձկանը առնում՝ ջուրն է գցում:

Ձկնորսը սաստիկ բարկանում է նրա վրա և ասում, որ է՛լ աչքին չերևա:

«Հիմա ես ու՞ր գնամ, ո՞նց ապրեմ, որ սովից չմեռնեմ», - մտածում է շալակտարը, մեկ էլ դեմը Հրեշն է դուրս գալիս: Մի կով է տալիս նրան, պայմանով, որ երեք տարուց գալու է ու հարց տա: Եթե շալակտարն իր հարցին պատասխանի՝ կովը նվեր կտա, եթե ոչ՝ իրեն էլ, կնոջն էլ կտանի, ինչ կուզի՝ կանի...

Այսպես ինքն ու կինը երեք տարի կովը կթում են, ուտում: Վրա է հասնում նշանակված օրը: Տխուր մտածում են, թե ինչ պատասխան



են տալու Զրեշին, մեկ էլ մի անծանոթ երիտասարդ է գալիս ու խնդրում է, որ իրեն հյուր ընդունեն: Աղքատն ասում է, որ այդ գիշեր վտանգավոր է իրենց մոտ մնալը, բայց երիտասարդը չի վախենում:

- Որտեղ դուք, այնտեղ էլ ես, - պատասխանում է ու մնում գիշերելու:

Կեսգիշերին դուռը դրդում է՝ Զրեշն էր:

- Մի՛ վախեցեք, - հանգստացնում է հյուրը, - ես սրա պատասխանը կտամ:

- Եկել եմ, - դռն հետևից ասում է Զրեշը:

- Ես էլ եմ եկել, - պատասխանում է երիտասարդը:

- Որտեղի՞ց ես եկել:

- Ծովի այն ափից:

- Ինչո՞վ ես եկել:

- Կաղ մոծակը թամբել եմ, վրան նստել եմ, եկել:

- Ուրեմն ծովը պստիկ է եղել:

- Ի՞նչ պստիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչել:

- Ուրեմն արծիվը ճուտ է:

- Ի՞նչ ճուտ, թևերի ստվերը քաղաք է ծածկում:

- Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:

- Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:

- Ուրեմն նապաստակը ձագ է:

- Ի՞նչ ձագ. մորթուց մի մարդու քուրք դուրս կգա:

- Ուրեմն մարդը թզուկ է:

- Ի՞նչ թզուկ. ծնկին աքլորը կանչի, ծայնը ականջը չի հասնի:



- Ուրեմն խուլ է:
- Ի՞նչ խուլ. սարում որ եղնիկը խոտ պոկի, մա կլսի:
Հրեշն զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, անհաղթելի,
սուսուկոս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:
Տանտերերը ուրախանում, աշխարհով մեկ են լինում:
- Դու փրկեցիր մեր կյանքը, - ասում են հյուրին, - ասա՛, ինչո՞վ
հետ վճարենք քո լավությունը...
- Լավությունն արա ու թեկուզ ջուրը գցիր, չի կորչի: Ես հենց
այն խոսող ծուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր... - ասում է
անծանոթն ու չքանում ապշած տանտերերի աչքերից:

(ըստ Դ. Թումանյանի «խոսող ծուկը» հեքիաթի)



- Շալակտարը ձկանն ինչու՞ ջուրը
զցեց:
- Ինչպե՞ս եք հասկանում «Լավություն արա ու ջուրը
զցիր» խոսքը:

ԵՔԵ ԴՈՒ ԻՄ ՏԵՂԸ ԼԻՆԵԻՐ...



Ընկերները միասին են թե՛ ուրախության, թե՛ տխրության մեջ:
Եթե կարողանաս հասկանալ, թե դիմացինդ ինչ է զգում, լավ
ընկեր կլինես, չէ՞ որ բոլորիս վարքն էլ մեր հույզերից է կախված:





2.

Բաժանվե՞ք խմբերի: Կարդացե՛ք իրավիճակները և գրե՛ք, թե ձեր կարծիքով տվյալ իրավիճակում հայտնված մարդն ինչ է զգում, և ընկերն ինչպես կարող է արձագանքել դրան:

1. Վարսենիկը չի կարողանում ստուգողականի խնդիրը լուծել:

Վարսենիկն ի՞նչ կզգա:

Ընկերն ինչպե՞ս կարող է օգնել նրան:

2. Անահիտին դպրոցական ներկայացման մեջ գլխավոր դեր են տվել:

Անահիտն ի՞նչ կզգա:

Ընկերն ինչպե՞ս կարձագանքի այդ լուրին:

3. Խաչիկի պապիկը հիվանդացել է:

Խաչիկն ի՞նչ կզգա:

Ընկերն ինչպե՞ս կարող է օգնել նրան:

4. Պարույրի ծնողները որոշել են առանձին ապրել:

Պարույրն ի՞նչ կզգա:

Ընկերն ինչո՞վ կարող է օգնել նրան:





ՏԱՐԲԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Մարդիկ տարբեր են, տարբեր են նաև նրանց կարողությունները: Այն, ինչ մեկը հեշտությամբ է անում, մյուսին կարող է դժվար թվալ: Մեկի համար խնդիր լուծելը խաղուպար է, մյուսի համար՝ դժվար հաղթահարելի, բայց նա էլ կարող է գեղեցիկ նկարել, ինչը զարմացնում է առաջինին: Մեկն այնքան լավ չի տեսնում, բայց փոխարենը սուր լսողություն ունի, մեկն արագավազ է, մեկ ուրիշը, թեև դանդաղ է շարժվում, բայց սրամիտ է և հետաքրքիր զրուցակից...

3. Բննարկե՛ք և պատասխանե՛ք.

- Պատահում է, որ ոմանք ծաղրեն մյուսների թուլությունները: Ի՞նչն է պատճառը:
- Դիմացինի վիճակում իրենց պատկերացնելը կարո՞ղ է օգնել, որ մարդիկ ուրիշներին չծաղրեն: Բացատրե՛ք:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Տեսրում լրացրե՛ք սյունակները:

Ես լավ եմ կարողանում

Ես դժվարանում եմ





1.

Լսե՛ք պատմությունը և ծափ տվե՛ք, երբ ձեր կարծիքով Տիգրանը վատ արարք է կատարում:



Տիգրանի տրամադրությունը բարձր էր: Այդ օրը Անիի ծնունդն էր, և նա էլ էր հրավիրված: Ուսուցչուհին դաս էր պատմում, բայց տղան նրան **չէր լսում**: Գրիչը վերցրեց ու նստարանին մեծ տառերով Անիի **անունը գրեց**: Այդ պահին զանգը հնչեց: Ուսուցչուհին դասարանից դուրս եկավ թե չէ՝ Տիգրանը **վազեց-ցատկեց նրա աթոռին**: Աթոռը ջարդվեց, և նա ցած թրմփաց, բայց լավ էր՝ շատ չվնասվեց:

- **Չասե՛ք, հա՛**, որ ես եմ կոտրել, - սաստեց ընկերներիս: Մնում էր պակաս, որ դրա համար ծնող կանչեին:

Հետո պայուսակը վերցրեց ու ընկերներին **հրմշտելով** աստիճաններով ցած վազեց. ժամանակ չուներ՝ դեռ պետք է Անիի համար նվեր գտներ: Հասավ զբոսայգի: Գարուն էր, ու զբոսայգու խնձորենիները ծածկված էին նրբիկ, հոտավետ ծաղիկներով: «Ո՞ր մի աղջիկը ծաղիկ չի սիրում», - մտածեց Տիգրանն ու մի մեծ **ճյուղ կոտրեց**: Հիմա հանգիստ էր. նվերը կար: Մի պաղպաղակ գնեց (դեռ մինչև ծննդյան տոթը շատ ժամանակ կար), թուղթը **գետին գցեց** ու պաղպաղակը լիզելով շտապեց Անիեց տուն: Այնքան էր շտապում, որ չտեսավ էլ տատիկին, որը շուկայից պայուսակներով բեռնված, տուն էր գալիս: **Կողքով արագ անցավ** ու դռան զանգը տվեց:

- Ծնունդդ շնորհավոր, Անի, - ծաղկած ճյուղն ընկերուհուն պարզելով՝ ասաց Տիգրանը...





- Տիգրանի արարքներից դատելով՝ ի՞նչ կմտածեք նրա մասին:
- Պատահե՞լ է, որ ձեր որևէ արարքի համար ամաչեք:
- Ինչպիսի՞ արարքներից հետո եք ձեզ լավ զգացել, նույնիսկ հպարտացել:




- 2.** Տեքստից դու՛րս գրեք Տիգրանի բոլոր վատ արարքները, ապա գրե՛ք, թե դրանք ինչ հետևանքներ կարող են ունենալ.

Օրինակ՝ **դասը չէր լսում** – հաջորդ օրը դասը չէր իմանա, «երկուս» կստանար...



- 3.** Ուշադիր նայե՛ք նկարներին և վերլուծե՛ք իրավիճակները. ե՞րբ են երեխաներն իրենց սխալ պահում: Ձեր կարծիքով ի՞նչ պիտի անեին:





4. Լսե՛ք պատմությունը և պատասխանե՛ք հարցերին.

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Կար-չկար, մի կատակասեր մարդ կար: Մի օր որոշում է հարևանների գլխին կատակ խաղալ: Տնից դուրս է վազում ու սկսում բղավել.

- Օգնե՛ք, տունս վառվեց:

Հարևանները դուրս են թափվում, որը դուլլով, որը տաշտով, որ ջուր լցնեն, հարևանի տունը փրկեն կրակից: Տեսնելով, որ սուտ էր, մի փոքր նեղանում են, բայց ձայն չեն հանում ու վերադառնում են տները: Իսկ սուտասանը մի կուշտ ծիծաղում է միամիտ հարևանների վրա:





Կատակն այնքան է դուրը գալիս, որ մի քանի անգամ էլ է նույն բանն անում. բղավում է, թե տունը հրդեհ է ընկել: Հարևաններն ամեն անգամ օգնության են հասնում ու տեսնում են,

որ էլի իրենց խաբել է:

Մի անգամ էլ տունն իսկապես հրդեհվում է: Մարդը դես է վազում, դեն է վազում, գոռում-գոչում է, որ օգնության գան, բայց էլ ո՞վ կհավատար: Հարևանները նույնիսկ դուրս չեն մայում: Մենակ չի կարողանում հրդեհի հախից գալ, ու տունն այրվում է...

Ահա թե ինչու են ասում. «Սուտ ասողի տունը կրակ ընկավ՝ չհավատացին»:

5. Ինչպե՞ս կրացատրեք.

- Հազար սուտ մի ճիշտ չարժե:
- Ստի ոտքը կարճ է:
- Շիտակ պատը փուլ չի գա:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՂԻՎՆԶ

- Փորձի՛ր հիշել, թե նախորդ շաբաթվա ընթացքում ինչ լավ արարք ես կատարել: Պատմի՛ր ընկերներիդ:
- Արե՞լ ես, արդյոք, մի բան, որ կուզենայիր արած չլինել: Մտածի՛ր՝ եթե մեկ անգամ էլ նույն իրավիճակում լինեիր, ինչպե՞ս կվարվեիր: Կարի՞ք չկա դրա մասին պատմել, բայց աշխատի՛ր չմոռանալ:



ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԻՄ ԿՅԱՆԸ


ԴԱՍ

1

ԻՄ ՀԵՏԱԶՐԶՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1. Թուղթը մատիտով բաժանիր չորս մասի: Մասերից երեքում նկարի՛ր կամ գրի՛ր քո նախասիրություններից, իսկ մեկում՝ մի բան, որ չես սիրում անել: Միացի՛ր ևս երեք հոգու:



2. Խմբով փորձե՛ք կռահել, թե յուրաքանչյուրի ներկայացրածից որն է իր չսիրած գրադմունքը:

- Ի՞նչն օգնեց ճիշտ կռահել: Խոսե՛ք ձեր հետաքրքրությունների մասին:
- Ի՞նչն է ձեզ գրավում:



3. Լսե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

ԻՆՉՈՐ ՀԵՌԱՑԱՆ

Մի տղա մի սև թավամազ փիսիկ ուներ, բայց շարունակ երազում էր շուն ունենալու մասին: Շունն ուրիշ է, շան հետ կարող ես ընկերություն անել, խաղալ... Այնքան շատ էր երազում, այնքան էր ուզում, որ վերջապես ծնողները նրան մի





սիրուն շնիկ նվիրեցին: Իհարկե, բացատրեցին, որ հիմա ի՞նքը պետք է հոգ տանի շնիկի մասին՝ կերակրի ու զբոսանքի տանի: Տղային շատ էր դուր գալիս շնիկի հետ խաղալը, բայց հենց բանը հասնում էր խնամելուն՝ դժվարանում էր կամ, ավելի վատ, ծուլանում: Այս բանը ծնողներին դուր չէր գալիս, էլ չեմ ասում շնիկի մասին:

Մի օր էլ շնիկը զբոսանքից տուն չվերադարձավ: Շնիկի հետ փխտոն էլ թողեց՝ փախավ տղայի մոտից:

Ինչպե՞ս եք հասկանում.

*Քանի խաղամ՝ դուր կգա,
Հենց որ ասեն՝ գործ արա,
Գլուխս ցավից շուռ կգա:*



- Իսկ ձեր նախասիրությունները ջանք պահանջում են:
- Երբևէ զղջացե՞լ եք ծուլության համար:
- Ի՞նչն է եղել ծուլության պատճառը: Ի՞նչ եք կորցրել ծուլության պատճառով:
- Երբևէ ջանասիրությունն օգնե՞լ է, որ ինչ-որ նպատակ իրագործեք: Ե՞րբ, ինչպե՞ս:





4. Լսե՛ք պատմությունները.

ԾՈՒՅԼԸ

Տաճատը ծուլ էր, ոչ գրել-կարդալ գիտեր, ոչ էլ արհեստ էր ուզում սովորել:

- Ի՞նչ արհեստ սովորեմ,- փնթփնթում էր նա,- բրուտի արհեստը լավն է, բայց անընդհատ կավի, ցեխի հետ գործ ունենալը հեշտ չէ: Դարբնի գործը լավ է, ծմեռն էլ տաք կլինի, բայց մեծ ուժ է պետք այդ գործի համար: Ահագին մուրճով երկաթը ծեծել, որ այն տափակի՝ ես դա չեմ անի, ինչ կուզի լինի:



- Պայտարը լավ է. մեխի ծայրը սրել և պայտեր շտկել՝ դա շատ դժվար չէ: Բայց մի ամեհի ծիու ոտք բռնելը, ծնկին դնելը երկյուղալի է: Ձիու աքացին ապտակից թունդ է: Չէ, իմ կարծիքով դա իմ բանը չէ:

- Դերձակությունը մաքուր արհեստ է, լավ հիշեցի: Բայց չէ՛, ամբողջ օրերով գլուխը կախ նստել, կարել ու կարել, աչք փչացնե՞լ: Չէ, իմ կարծիքով դա ինձ համար չէ:

- Գուցե գնամ որմնադի՞ր դառնամ, բարձր պատերի գլխին կանգնեմ, այնտեղից կանչեմ. «Քար ու կիր տվե՛ք, շաղախ տվե՛ք, աղյուս ուղարկե՛ք»: Բա որ հանկարծ ոտքս սայթաքի ու թրմփալով ներքև գլորվեմ, մեռնե՞մ: Չէ, դա հեշտ գործ չէ, ինձ էլ հարմար չէ:

- Փայտահատ դառնամ՝ ոտքս կկտրեմ, կոշկակար դառնամ՝ ձեռքս կծակեմ, ոսկերիչ դառնամ՝ մատներս կայրեմ, դպրոց գնամ՝ դաս պիտի սովորեմ: Չէ, իմ կարծիքով ամենահեշտը ոչինչ չանելն ու չսովորելն է:

Ըստ Ղազարոս Աղայանի



ՋԱՆԱՍԵՐԸ

Տաճատը բոլորի կողմից շատ սիրված մասնագետ էր դարձել: Նրա անունը հայտնի էր երկրով մեկ, և նույնիսկ հեռու տեղերից մարդիկ գալիս էին նրան դիմելու: Շատ էր աշխատում, շատ էլ վաստակում էր ու լավ ապրում: Բոլորն ուզում էին նրան աշակերտել, նրանից գործը սովորել, որ նույնքան հմուտ, ճանաչված ու հարգված լինեին:



- Ձեր կարծիքով ինչպիսի՞ ապագա է սպասում ծուլին: Բացատրե՛ք՝ ինչու:
- Թվարկե՛ք, թե ինչ հատկությունների շնորհիվ է ջանասերը հասել իր նպատակներին:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Փոքրիկ շարադրություն գրիր, թե ինչ կուզեիր դառնալ, երբ մեծանաս:



ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ
ԺԱՄԱՆՑ



1. Թվարկե՛ք և տեսրո՞ւմ գրե՛ք երկու սյունակով.

Գործեր, որ չենք սիրում անել:	Գործեր, որ հաճույքով ենք անում:
---------------------------------	------------------------------------



2. Լսե՛ք պատմությունը և պատասխանե՛ք հարցերին:

ԹՈՄՔ ՑԱՆԿԱՊԱՏ Է ՆԵՐԿՈՒՄ

Թոմը տանից դուրս եկավ՝ մի մեծ վրձին ու ներկով դույլը ձեռքին: Հայացքը գցեց ահռելի ցանկապատին, որը որպես պատիժ պետք է ներկեր: Մտածեց, թե ինչ ուրախ ծրագրեր ուներ այդ օրվա համար, և որ հիմա տղաները, եթե իրեն աշխատելիս տեսնեն, ո՛նց են ծաղրելու: Հանկարծ մի միտք ծագեց գլխում: Վրձինը ձեռքն առավ ու սկսեց ներկել: Շուտով հայտնվեց Բեն Ռոջերսի պեպենոտ դեմքը: Սրա ծաղրուծանակն ամենից շատ էր



սարսափեցնում թոմին: Բենը հեգնանքով հարցրեց.

- Յը, խեղճ տղային գործի՞ եմ դրել:

Թոմը ձև արեց, թե նոր է նկատում նրան ու անտարբեր ծայնով հարցրեց.

- Ի՞նչ գործ:

- Չլինի՞ ուզում ես ասել, որ ցանկապատ ներկելը գործ չէ:

- Քեզ համար գուցե և գործ է, իսկ ինձ համար՝ բավականություն, ամեն օր բախտ չի վիճակվում ցանկապատ ներկել:

Բենը մտքերի մեջ ընկավ, հետո հանկարծ ասաց.

- Կտա՞ս, մի քիչ էլ ես ներկեմ:

- Չէ, Բեն: Դեռ բակի կողմից լիներ, կգիջեի՝ չէ՞ որ ընկերս ես:

Բայց փողոցի կողմից ներկելը պատասխանատու գործ է:

- Լա՛վ էլի, թոմ, շատ եմ խնդրում: Ուզու՞մ ես, խնձորս քեզ կտամ:

- Լավ, - իբր թե դժկամությամբ, Թոմը վրձինը Բենին գիջեց:

Յետո Բենին Ջոնը փոխարինեց, ապա՝ մյուս տղաները: Ամենքը թոմին իրենց «գանձերից» մի բան էին տալիս, միայն թե իրենց էլ թույլ տար մի քիչ ներկել:

Շուտով Թոմը «գանձերի» մի կույտ էր հավաքել. 12 ապակյա գնդիկ, կտորված շրթհարմոն, կապույտ ապակու կտոր, որի միջով կարելի էր արևին նայել, դատարկ կոճ՝ օճառի պղպջակներ սարքելու համար, պարանի ծայրին կապած սատկած առնետ, որ կարելի էր գլխիդ վերևը արագ պտտեցնել...



Թոմը հանկարծ հասկացավ մի շատ պարզ բան՝ որպեսզի մի բան ուզենաս անել, պետք է այդ բանը քեզ դժվարությամբ տրվի: Գործն այն է, ինչը պարտավոր ենք անել, իսկ խաղը՝ այն, ինչը պարտավոր չենք անել: Դրա համար էլ ջրհորից ջուր կրելը ծանր աշխատանք է, իսկ քարքարոտ ժայռեր մագլցելը՝ բավականություն: Պատահում է, որ մարդիկ պատրաստ են վճարել, միայն թե իրենց թույլ տան ինչ-որ գործ կատարել, որը երբեք չէին անի, եթե իրենց դրա համար աշխատավարձ տային:

Ըստ Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» վիպակի



- Ի՞նչ եք կարծում, ինչու՞ էր Թոմը տհաճությամբ ներկում ցանկապատը, իսկ ընկերները՝ հաճությով:



3.

Մեր վերաբերմունքից կախված՝ միևնույն աշխատանքը կարող է հաճելի գործ կամ ծանր պարտականություն դառնալ: «Չսիրած գործերի» ցանկից ընտրեք մեկը և փորձեք ներկայացնել, թե ինչպես կարելի է այն հաճելի զբաղմունք դարձնել:



4.

Գտե՛ք և համադրե՛ք ասացվածքների համապատասխան կեսերը: Մեկնաբանե՛ք:

- | | |
|-------------------------|---------------------------|
| 1. Ուտելիս գայլ է, | ա) փորը՝ քաղցած: |
| 2. Ծառի տակ պառկելով | բ) աշխատելիս՝ աղվես: |
| 3. Ես աղա, դու աղա, | գ) սովորիր քեզ համար : |
| 4. Ձեռքը՝ պարապ, | դ) տանձը բերանդ չի ընկնի: |
| 5. Գործն արա ինձ համար, | ե) բա մեր ցորենն ո՞վ աղա: |






Նկարների փոխարեն տառերը տեղադրելով՝ կարդա՝
գաղտնագրված ասացվածքը:



Գ Ս Ռ Ա ՈԼ Յ Ն Թ



Բ Ե Ր Ը Ս Շ Կ Տ





1. Կարդացե՛ք պատմությունը և պատասխանե՛ք հարցերին:

ՆՈՒՇԻԿԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Նուշիկի զ¹արթուցիչը գնագաց, և նա վեր կացավ: Երկուշաբթի էր, և պիտի դպրոց գնար: Լվացվեց, ատամները մաքրեց, հագնվեց, հետո անկողինը հավաքեց ու գնաց խ²ոհանոց: Մայրիկը մ³ախաճաշ էր պատրաստել: Թեյեց: Պայուսակը դեռ երեկոյան էր պատրաստել, ու էլ ժամանա⁴ չկորցրեց՝ վերցրեց և գնաց դպրոց:

Կեսօրին դպ⁵րոցից տուն եկավ: «Տեսնենք՝ ի՞նչ գործեր ունենմ», - մտածեց Նուշիկը, - «պիտի սենյակս հավաքեմ, բայց ի՞նչը հավաքեմ, ամեն ինչ իր տեղում է: Փոշին մաքրեմ»: Հետո նստեց դասերն անելու, որ գնա զբոսանքի: Դասերն արագ արեց, որ⁶դիետև դասարանում ուսուցչուհուն ուշադիր էր լսել և ամեն ինչ լավ հիշում էր: Միայն մա⁷քեմի խնդիրը պիտի լուծեր. «Ութ խն⁸ձոր ունես», - ասում էր խնդիրը, - «կարո՞ղ ես հա⁹վասար բաժանել բոլոր ընկերների¹⁰ միջև»: Նուշիկը, իհարկե, կոտորակները լավ է¹¹ր սովորել, բայց մի ավելի հետաքրքիր լուծում գտավ: Քանի որ ժամանակ ուներ, գնաց բակ՝ խաղալու, իսկ տուն գալիս հետն այգուց ութ խնձոր բ¹³րեց...

Հաջորդ օրը Նուշիկն իր¹⁴ լուծումը դասարան տարավ: Դաս¹⁵ընկերներն այնքա՛ն հրճվեց¹⁶ին նրա լուծոմ¹⁷ից...





2. Գաղտնագրում թվերի փոխարեն համապատասխան համարի տառերը տեղադրելով՝ իմացե՛ք, թե ինչպիսի խելամիտ լուծում էր մտածել Նուշիկը:

2	3	8	6	5	6	9		4	1	5	4	1	3	10	1	4		11	5
7	2	13	14		15	3	4	13	5	3	13	5	16		12	1	17	1	5



3. Փոքրիկ պատմվածք հորինե՛ք, այնպես, որ «Գործը գայլ չի, անտառ չի փախչի» և «Գործը վաղվան որ մնաց, իմացիր՝ կորավ գնաց» ասացվածքներից մեկը պատմվածքի սկիզբ ծառայի, մյուսը՝ վերջ: Ձեր պատմվածքները ներկայացրե՛ք դասընկերներին:



4. Մնջախաղ

- Բաժանվեք երկու թիմի, որոշեք, թե որ թիմն է սկսելու:
- Միասին որևէ խաղ կամ ժամանցի ձև ընտրեք և մնջախաղով ցույց տվեք հակառակորդ թիմին:
- Եթե կռահեն՝ հերթն իրենցն է, եթե ոչ՝ մեկ այլ ժամանց ցույց տվեք:

Հաղթում է այն թիմը, որն ավելի շատ անգամ է կռահել:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Տեսրում ժամացույցների թվատախտակին սլաքներ նկարելով, նշի՛ր ժամերը, իսկ դիմացը գրի՛ր այն գործերը, որ սովորաբար անում ես այդ ժամերին, այնպես, որ ստացվի քո մեկ օրվա ռեժիմը:

Օրինակ 1.



- 1) Արթնանում եմ, լվացվում ու հագնվում:
- 2) Նախաճաշում եմ ու դպրոց գնում:
- 3) և այլն:



ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼ, ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ՊՏՆԵԼ



1. Լսե՛ք պատմությունը և պատասխանե՛ք հարցերին:

ՆԿԵՐԸ

Դնչիկ խոզուկին ծննդյան օրը մի սիրուն կապույտ փուչիկ էին նվիրել: Դնչիկն ուրախ-ուրախ գնաց իր ամենամոտ ընկերոջ՝ Վինի Թուխ արջուկի մոտ, որ նվերը նրան ցույց տա, ու միասին խաղան:

- Շու՛տ եմ ասել՝ ե՛ս եմ փչելու, - բղավեց Թուխն ու Դնչիկի ձեռքից խլեց փուչիկը: Դնչիկը ձայն չհանեց. չէ՞ որ Թուխն իր ընկերն էր:



Թուխը թոքերն օդ հավաքեց և ինչքան ուժ ուներ՝ փչեց: Փչեց-փչեց, փուչիկը մեծացավ, մեծացավ...

- Տե՛ս, Դնչի՛կ, - հպարտ բացականչեց Թուխը, - ինչքան մեծ է, ոնց որ կապույտ ամպիկ լինի: Ու շարունակեց փչել...

Գը՛մփ... Հանկարծ ինչ-որ անհասկանալի բարձր ձայն լսվեց ու... փուչիկից մի փոքրիկ կապույտ լաթի կտոր մնաց:





- Սա ի՞նչ է, - կապույտ լաթին նայելով՝ լացակումած հարցրեց Դնչիկը, - իմ փուչի՞կը...

- Լավ, մեծ բան չէր, - մխիթարեց Թուխը, - առանց փուչիկի էլ կխաղանք:

Բայց Դնչիկը մեջքը Թուխին դարձրեց ու այլևս ոչ մի խոսք չասաց:

Ըստ Ալան Միլնի «Վինի թուխը և բոլոր-բոլորը» վիպակի



- Երբևէ պատահե՞լ է, որ ընկերներով նեղանաք իրարից Ո՞րն էր պատճառը:
- Ինչպե՞ս եք հետո հաշտվել:



2. Երկու-երեք նախադասությամբ պատմությունն այնպես ավարտեք, որ Դնչիկն ու Թուխը կարողանան հաշտվել: Առաջնորդվե՛ք հետևյալ քայլերով.

- մտածեք, թե ինչ կարելի է անել այդ իրավիճակում,
- քննեք ձեր առաջարկների լավ և վատ կողմերը՝ ի՞նչ հետևանք կարող են ունենալ,
- ապա ընտրեք լուծման լավագույն տարբերակը:
Ձեր տարբերակները ներկայացրե՛ք դասարանին:





- Ձեր կարծիքով՝ ներկայացվածներից ո՞ր լուծումն էր ավելի լավ: Ինչու՞ եք այդպես կարծում:



3. Կարդացե՛ք իրավիճակները և գտե՛ք ընդհարման պատճառը: Փորձե՛ք այնպիսի պատասխաններ մտածել, որ խուսափեք վեճից:

1. Ուզում ես՝ քեզ էլ բաժին տա՞մ: Է՞լ ինչ կուզեիր:
2. Ես քեզնից ուժեղ եմ, հիմա՛ր, շատ խոսես՝ կհասցնեմ:
3. Հետո՞ ինչ, որ ստուգողականից «5» ես ստացել: Կարծում ես շատ խելոք ես, հա՞: Թիթի՛գ:
4. Հիմար տեսք ունես: Ի՞նչ ես քեզ երևակայում:
5. Քեզ ո՞վ թողեց առանց հարցնելու գրիչս վերցնես: Գողի՛ մեկը:



- Ձեր կարծիքով ինչպիսի՞ վարքը կարող է ընդհարման պատճառ դառնալ:
- Մեր պահվածքը կարևո՞ր է ընդհարումից խուսափելու համար: Ինչու՞:
- Կարո՞ղ ենք դիմացիներին թելադրել, թե իրենց ինչպես պահեն:
- Կարո՞ղ ենք ինքներս մեր արարքները, վարքը կառավարել:



4. Տարբերակներից ընտրիր, թե ո՞րն է ավելի արժանապատիվ՝ ա), բ) թե՞ գ) տարբերակը.

- ա) կոպիտ պահվածքին նույնքան կոպիտ պատասխան տալը,
- բ) զգացմունքները զսպելով՝ պատասխանի չարժանացնելը,
- գ) դիմացինին իր արարքի անվայելությունը բացատրել փորձելը:

Պատահում է, որ ընկերները չնչին առիթներով վիճեն իրար հետ, հաճախ վեճի պատճառ կարող է դառնալ այն, որ երկու հոգի միևնույն իրավիճակում տարբեր շահեր ունեն, և յուրաքանչյուրին թվում է, թե ի՞ր շահն է կարևորը: Բայց ավելի լավ չէ՞ խուսափել նման վեճերից: Դրան կօգնի զուսպ, բարեկիրք վարքագիծը: Մանավանդ, որ հաշտության հասնելու համար հաճախ ավելի մեծ ջանքեր են պետք, քան պարզապես չվիճելու համար:





5. Տրված իրավիճակներով դերախաղ կատարեք. զույգերով վերլուծե՛ք իրավիճակները՝ յուրաքանչյուրդ ձեր տեսանկյունից: Մտածե՛ք և փորձե՛ք համաձայնության գալ:

Իրավիճակ 1.

Ա - Դու դպրոցի ֆուտբոլի թիմի անդամ ես: Դասերից հետո պետք է մաքեմատիկայի վաղվա ստուգողականին պատրաստվես, բայց ձեր թիմի ավագը քեզ կանչում է մարզվելու. վաղը մրցում ունեք, և ձեր հաղթանակը կարևոր է:

Բ - Դու ձեր դպրոցի ֆուտբոլի թիմի ավագն ես: Վաղը կարևոր մրցում ունեք, իսկ ձեր թիմից մեկը չի եկել մարզվելու: Դու գնում ես նրան փնտրելու, իսկ նա դասասենյակում մաքեմատիկայի ստուգողականին է պատրաստվում:

Իրավիճակ 2.

Ա - Դու սենյակդ կիսում ես մեծ քրոջդ հետ: Երեկոյան սենյակում նստած պարապում ես: Գալիս է քույրդ և ասում, որ ընկերուհուց մեկ օրով նոր ծայնագրություններ է վերցրել ու անպայման պիտի լսի:

Բ - Դու սենյակդ կիսում ես փոքր քրոջդ հետ: Ընկերուհուց նոր ծայնագրություններ ես վերցրել և անպայման ուզում ես լսել: Բայց պարզվում է, որ քույրդ սենյակում պարապում է:




- Կարողացա՞ք համաձայնության գալ, թե ում շահն էր առաջնահերթ: Ինչպե՞ս կողմնորոշվեցիք:
- Ինչպե՞ս է ավելի հավանական ուզածին հասնելը՝ վեճի՞ միջոցով, թե՞ խաղաղ ճանապարհով:





Ուշադիր նայի՛ր նկարներին. ի՞նչն էր «երկուսի» պատճառը:



Հիշի՛ր.

Նախ գործի արա, հետո նոր խաղա:



ԴԱՍ 1

ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ



1. Կռահե՛ք, թե նկարներում ո՞ր սարքի ո՞ր մասն է պակաս: Առանց այդ մասի սարքն ինչպե՞ս կաշխատի:



ՄԱՐՄԻՆՆ ԱՇԽԱՏՈՂ ՄԵՔԵՆԱ Է

Մեր մարմինն էլ տարբեր մասերից բաղկացած մի մեքենա է: Այդ մասերից յուրաքանչյուրն իր հավատարիմ օգնականների հետ իր գործն է կատարում և այսպես թիմերով աշխատելով ու իրար լրացնելով՝ օգնում են, որ մարդն ապրի:

Օրինակ՝ **սիրտը**՝ արյան շրջանառության կառավարիչը, մխոցի նման անդադար աշխատելով, մեր մարմնի բոլոր մասերին արյուն է մատակարարում իր գործընկերների՝ **զարկերակների, երակների** ու **մազանոթների** օգնությամբ:




2. Թվարկե՛ք.

- Մարմնի ի՞նչ մասեր գիտեք, ինչի՞ համար են դրանք:
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ սրտի տեղը:
(Ձեռքը դրե՛ք կրծքին և լսեք զարկերը):
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ թոքերի տեղը:
(Խոր շունչ քաշեք և արտաշնչեք: Նկատեցի՞՞ք կրծքավանդակի ընդարձակվելը):
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ ստամոքսի տեղը:
(Հիշե՛ք՝ երբ չափից ավելի եք ուտում, մարմնի ո՞ր մասում եք ծանրություն զգում):




ԻՆՋԻՑ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՎԱԾ



1. Կարդացե՛ք և օգտվելով ընդգծված բառերից՝ լրացրե՛ք նախադասությունները:

Ինչպես որ տունը կառուցված է քարերից, մեր մարմինն էլ կառուցված է **բջիջներից**: Դրանք **չափով** ու **ձևով** տարբեր են,



բայց բոլորն էլ ունեն **կորիզ**, որը բջջի կենտրոնն է և կառավարում է նրա աշխատանքը: Բջիջները **կիսվում են**՝ բաժանվում նույնանման բջիջների: Մարմնի տարբեր մասերի բջիջները տարբեր են և յուրաքանչյուրն իր պարտականությունն է կատարում. օրինակ՝ **մկանային բջիջներն** օգնում են, որ շարժվենք, **նյարդային բջիջները** ուղեղից տեղեկություն են փոխանցում մարմնի այլ մասերին, իսկ **արյան բջիջները** մարմնի մյուս բջիջներին **թթվածին** են փոխանցում:





2. Օգտվելով «Ինչից ենք կառուցված» տեքստում ընդգծված բառերից՝ լրացրո՛ւ նախադասությունները.

1. - 5 - - - ը կառավարում է բջի գործունեությունը:
2. Բջիջները տարբեր - - 4 ու - - են ունենում:
3. Մեկ բջիջը կարող է 3 - - - 2 - և դառնալ երկու բջիջ:
4. 1 - - - - - բջիջներն օգնում են, որ շարժվենք:
5. Արյան բջիջները - - - - - 8 - են հասցնում մեր մարմնի այլ բջիջներին:
6. Ուղեղից - - - 7 - - - - բջիջները տեղեկություն են հաղորդում մեր մարմնին:
7. Տունը կառուցված է 6 - - - - ից, իսկ մարմինը՝ բջիջներից:

Ո՛ՆՅ ԵՆՔ ՄԵԾԱՅԵԼ




«Այ քեզ բա՛ն, շորերս վրաս փոքրացել են», - ասում ենք: Բոլորիս հետ էլ պատահել է: Իրականում մենք ենք մեծացել: Իսկ ինչպե՞ս է մարմինն աճում: Մեր մարմինը կազմող միլիոնավոր բջիջների հիմնական գործերից մեկն էլ հենց մեր աճն ապահովելն է. մի բջիջը կիսվում՝ դառնում է երկուսը, երկուսն էլ իրենց հերթին, կիսվում, դառնում են չորսը և այսպես շարունակ:



3. Բաժանվեք խմբերի և կատարեք գործնական աշխատանքը:

- Չափե՛ք և գրանցե՛ք միմյանց հասակն ու քաշը: Համեմատե՛ք ծնվելիս ունեցած տվյալների հետ:
- Հասակը չափելու սանդղակ պատրաստե՛ք և յուրաքանչյուրիդ հասակը նշե՛ք տարբեր գույնով:
- Ուրվագծե՛ք ձեռքի ափը, մեջը գրե՛ք ձեր անունն ու քաշը:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆ

2-րդ վարժության բառերը գուլշակելուց հետո թվերը փոխարեն տեղադրի՛ր համապատասխան տառերը և կարդա նախադասությունը:

Պատկերացնու՞մ եք, կյանքն սկսվում է

1 2 3 4 5 6 7 8 3 բջջից:



ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ԴԵՆԱՐԱՆԸ




Տեսե՞լ եք՝ ինչպես են տուն կառուցում. նախ կանգնեցնում են հենասյուները, որոնք շենքին ամրություն են տալիս, ապա պատերն են շարում: Իսկ ի՞նչն է մեր մարմնին ծն ու ամրություն տալիս:

Մեր մարմնի հենարանը կմախքն է՝ կազմված երկու հարյուրից ավելի ոսկրերից:

Կմախքին են ամրանում մեր մկանները, և դրա շնորհիվ է, որ մենք շարժվում ենք: Կմախքը նաև պաշտպանում է ներքին օրգանները:

Ոսկրերն արտաքինից կարծր են կալցիում նյութի շնորհիվ, իսկ ներսում ոսկրածուծն է, որը շարունակ արյան նոր բջիջներ է ստեղծում: Դիմա հասկանալի՞մ եք, թե որքան կարևոր է, որ ոսկրերն առողջ լինեն:



1. Կռահի՛ր հանելուկները և կիմանաս, թե որոնք են այն մթերքները, որ պետք են քո ոսկրերին և ատամներին: Նկարի՛ր դրանք և ընկերներիդ հետ «Ամուր ոսկրեր և ատամներ» անունը կրող պաստառ պատրաստիր:

Հ ա ն ե լ ու կ ն ե ռ

Յոթ ուլունք՝
Կանաչ ծրարում:

վժսղ

Թներ ունի, չի թռչում,
Ածան է, չի կշկչում,
Այնտեղ, ուր մենք ենք շնչում,
Իսկույն իր շունչն է փչում:

հոս

Մեջն ուտելիք,
Դուրսը վառելիք:

եղևիք

Հեղուկ է, ջուր չէ,
Ծերմակ է, ձյուն չէ:

ժմհ

Ի՞նչ պտուղ է կոշտ ու կոպիտ,
Կեղև ունի փայտի պես պինդ.
Մեջը՝ անուշ յուղոտ խորիզ,
Չունի, սակայն, ոչ մի կորիզ:

եղևիք

Կանաչ արոտից բերած,
Ծերմակ հեղուկից մերած,
Առավուրդ արթնանամ,
Մի կուշտ ուտեմ՝ ամրանամ:

նախիթ

Ոսկի կաթիլ ծառից քաղեմ,
Մեր կտուրին տանեմ՝ փռեմ,
Չմռանն ուտեմ՝ ամառ հիշեմ:

վվ՝ վղոսվո

Ո՞վ չի սիրում անմահական
Ոսկի պտուղն այս հայկական:

ղոսվո






2. Փորձե՛ք վերացնել խառնաշփոթը. գտե՛ք նախադասությունների մասերը, համադրե՛ք և կարդացե՛ք:

1. Խոզանակի թեթև համար պետք է դրանք մեծության մածուկ քսել:
2. Խոզանակը թրջել և առավոտյան և քնելուց առաջ մաքրել:
3. Առողջ ատամներ ունենալու սեղմումներով վերից վարջրով ողողել:
4. Ատամի մածուկի տուփը փակել, վրան սիսեռի հատիկի շփել ատամները:
5. Բերանը մի քանի անգամ խոզանակը լվանալ և տեղը դնել:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Լավ մաքրի՛ր հավի ոսկորը:
- Տեղադրի՛ր թափանցիկ ամանի մեջ:
- Վրան քացախ լցրու՛ և կափարիչով փակի՛ր:
- Թո՛ղ, որ մնա երկու շաբաթ
- Ուտումնասիրի՛ր ոսկորը. ի՞նչ կպատահի, երբ քացախը ոսկորից հեռացնի կալցիումը:





ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Մեր ոսկրերի և ատամների համար անհրաժեշտ կալցիումը մենք ստանում ենք սննդից: Տառերի բավիղում գտիր քեզ քաջ ծանոթ մթերքները, որոնք հարուստ են կալցիումով:



Կաթնաչոռ



Ձուկ



Նարինջ



Ոլոռ



Լոբի



Չիր



Պիստակ



Սպանախ



Պանիր

ա	բ	ս	գ	դ	ե	չ	զ	է
ը	կ	պ	թ	կ	ժ	ի	պ	ի
լ	մ	ա	ն	դ	ա	ր	ի	ն
խ	ծ	ն	թ	կ	հ	թ	ս	ծ
ղ	ճ	ա	պ	ն	մ	մ	տ	յ
ն	շ	խ	ա	ո	ա	չ	ա	ո
պ	ջ	ռ	ն	ս	ծ	շ	կ	լ
լ	ո	բ	ի	ծ	ու	կ	ո	ո
վ	ն	ա	ր	ի	ն	ջ	ֆ	ռ



Մածուն



Մանդարին



Կաթ



ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ



ՊԱՏԱՌԻԿԻ ՃԱՍԹՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Մեր մարմինն էլ, մեքենաների պես, աշխատելու համար վառելիքի կարիք ունի: Այդ կարիքի մասին առաջինն ուղեղն է իմանում և անմիջապես մեզ իմաց է տալիս՝ սովածանում ենք: Պարզվում է, որ մեր վառելիքն էլ սնունդն է, որից մեր մարմինը վերցնում է իրեն անհրաժեշտ նյութերը: Այս գործով զբաղվում է մարսողական համակարգը:

ՍՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՇԻՆԱՆՅՈՒԹՆ Է

Ինչպե՞ս, մենք հո գազարից, բլիթներից ու խնձորից չե՞նք պատրաստված...


Պարզվում է, որ մարսվելով, ուտելիքը տրոհվում է տարբեր մասերի՝ սննդանյութերի: Այդ սննդանյութերը մարմնին եռանդ են տալիս և օգնում են աճել:






1. Նկարի օգնությամբ հետևե՛ք Պատառիկի անցած ճանապարհին:

1. Մեր առողջ ատամներով խնձորից Պատառիկ ենք կծում:
2. Խնձորից կծած Պատառիկը պետք է շա՛տ լավ ծամենք:
3. Երբ թուրքը բավարար փափկացնում է Պատառիկը, այն արդեն կարելի է կուլ տալ:
4. Երբ կուլ ենք տալիս, Պատառիկը կերակրափողով ճամփա է ընկնում դեպի ստամոքս:
5. Ստամոքսահյուսքն օգնում է, որ ստամոքս հասած Պատառիկը լուծվի:
6. Ստամոքսահյուսքի օգնությամբ ստամոքսում լուծվելով՝ Պատառիկն անցնում է բարակ աղիներ:
7. Երբ Պատառիկը բարակ աղի է հասնում, արյունը նրանից վերցնում է բոլոր անհրաժեշտ նյութերը:
8. Մեր մարմնի համար ոչ պիտանի ավելորդ նյութերը գնում են հաստ աղի:





2. Կարո՞ղ եք գտնել, թե ո՞ր սննդանյութը ի՞նչ է տալիս մեր մարմնին:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Բավիղից օգտվելով՝ տեսրու՞մ լրացրու աղյուսակը. ո՞ր մթերքներն են նշված սննդանյութերով հարուստ:

Զուր

Հանքանյութեր

Վիտամիններ

Սպիտակուցներ

Ճարպեր

Ածխաջրեր



ՄԵՋ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՈՒՂԵՐԸ



ԽԵԼՔԻ ՀՏԵՄԱՐԱՆ

Մեր մարմնի ամենակարևոր մասերից է **գլխուղեղը**: Այն մի շարք կարևոր պարտականություններ է կատարում: Օրինակ, **կառավարում է մեր շարժումները՝** քայլելը, վազելը, գնդակ խաղալը, պատառաքաղ բռնելը, ինչպես նաև՝ լսելու, տեսնելու, համի, շոշափելիքի, հոտառության **զգայարանները**: Ուղեղով է կառավարվում նաև մեր **խոսելն ու մտածելը**: Ուղեղը երկու կես ունի: Աջ կեսը կառավարում է մարմնի ձախ կեսի շարժումները, իսկ ձախը՝ աջ կեսինը: Կանոնավոր աշխատանքի համար **ուղեղին արյուն է հարկավոր**: Արյունն ուղեղին է հասցնում նրա առողջության համար անհրաժեշտ թթվածին, վիտամիններ և այլ սննդանյութեր:





1. Մեր զգայարաններն անընդհատ տեղեկություններ են հաղորդում գլխուղեղին:

1. Օդապարուկին նայելով վազում ես:



2. Պատահաբար ոտքդ դնում ես մի սուր քարի:



3. Շոշափելիքի զգայարանը իսկույն զգուշացնում է ուղեղին:



4. Ուղեղն իսկույն գրանցում է ցավը և ոտքին կարգադրում է հետ քաշվել:



Իսկ հիշողության մեջ գրանցվում է ձեռք բերված փորձը՝ նայի՜ր՝ ուր ես դնում ոտքդ և խուսափի՜ր սուր քարերից:





- Կարող ես տարբեր զգայաբաններով ստացած տեղեկությունների վերաբերյալ քո փորձից նման օրինակներ հիշել:



Մեր հինգ զգայաբաններն անընդհատ տեղեկություններ են հաղորդում գլխուղեղին: Բայց վերջինս չի կարող առանց ընդմիջումների աշխատել և հանգստի կարիք ունի: Ահա թե ինչու ենք մենք քնում: Քնի ժամանակ, ճիշտ է, նվազ ծանրաբեռնված ուղեղը չի դադարեցնում իր աշխատանքը, նա շարունակում է գրանցել արտաքին աշխարհից ստացվող տեղեկությունները:



2. Փորձիր որքա՞ն արագ ես արձագանքում.

- Ձեռքիդ ափը դիր սեղանին:
- Խնդրիր ընկերոջդ, որ ռետինը մոտավորապես 30 սմ բարձրության վրա պահի և առանց զգուշացնելու բաց թողնի: Հասցրի՞ր ձեռքդ քաշել:
- 5 անգամ կրկնիր փորձը և տեսրուն գրանցիր արդյունքը՝ աղյուսակում նշելով.

	1	2	3	4	5
Կպավ					
Փախցրի					





- Ի՞նչ մասնագիտություններ գիտես, ուր կարևոր է արագ արձագանքել կարողանալը:

Այն ի՞նչն է, ինչը...

Տասը համերաշխ ընկեր
Կողք-կողքի ապրում,
Միասին աշխատում են
Ու իրար օգնում:
(ՍՍՀՄ-ում)

Հասակակից երկու եղբայր,
Իրար չափի, իրար նման,
Մեկը՝ վարպետ ու ղեկավար,
Մյուսը նրան միշտ օգնական:
(ՍՍՀՄ-ում)

Պետք է գալիս մեզ ողջ կյանքում,
Կյանքի ամեն թոփուրիում:
Ունը շատ է՝ չի պարծենում,
Ունը քիչ է՝ չի դժգոհում:
(ՍՍՀՄ-ում)

Բազմած մի մութ ամրոցում՝
Ինձ իր կամքն է թելադրում.
Թե ուզենա՝ կհիշեմ,
Թե կարգադրի՝ կշարժվեմ:
(ՍՍՀՄ-ում)





Սովորաբար մարդկանց մոտ ուղեղի մեկ կիսագունդը գերիշխող է: Օրինակ, եթե մարդ գրում է աջ ձեռքով, ուրեմն նրա մոտ գերիշխող է ձախ կիսագունդը և հակառակը: Պատասխանի՛ր հարցերին և պարզի՛ր, թե ձեզ մոտ ուղեղի ո՞ր կիսագունդն է գերիշխող:

Փորձի՛ր կատարել	Աջ	Ձախ
Մատներդ խաչելով՝ ձեռքերդ ավերը միացրու՛. ո՞ր ձեռքդ է վրան, որը՝ տակը:		
Մի բառ գրիր. ո՞ր ձեռքով բռնեցիր գրիչը:		
Երեք քայլ արա. ո՞ր ոտքից սկսեցիր:		
Ձեռքդ կրծքիդ խաչի՛ր. ո՞ր ձեռքդ է վրայից:		
Աչքո՛վ արա ընկերոջդ. ո՞ր աչքդ թարթեցիր:		
Պատառաքաղով մի բան վերցրու՛. ո՞ր ձեռքով բռնեցիր:		
Մեկ ոտքի վրա 5 անգամ ցատկի՛ր. ո՞ր ոտքով ցատկեցիր:		
Բանալու անցքից կամ խոշորացույցով նայի՛ր. ո՞ր աչքով նայեցիր:		



- Քանի՞ անգամ աջն օգտագործեցիր: _____
- Քանի՞ անգամ ձախն օգտագործեցիր: _____
- Քո ուղեղի ո՞ր կողմն է հավանաբար գերիշխող: _____

(Զգույշ եղի՛ր՝ չսխալվես... հակառակն են):




ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ




Հետաքրքիր է, չէ՞, հայելու մեջ նայելը: Հայելին ցույց է տալիս, թե ինչպիսին եմ:

ԱՋՋԵՐՍ

Ահա աչքերս, շուրջը՝ թարթիչներ, վերևը՝ հոնքեր: Թարթիչներն ու հոնքերն աչքերը պաշտպանում են փոշուց ու կեղտից: Աչքերիս կենտրոնում սև կետիկներ կան: Դրանք **բիբերն** են, որ ասես լուսամուտ լինեն, որտեղից տեսնում եմ աշխարհը: Բիբերը կարող են մեղանալ ու լայնանալ: Բիբերի հետևում **ոսպնյակներն** են: Դրանք էլ են մեղանում ու լայնանում, կախված այն բանից՝ հեռու՞ն եմ ուզում տեսնել, թե՞ մոտիկը: Պատկերները **տեսողական նյարդով** հասնում են ուղեղիս:



Տեսողական նյարդ



ԱԿԱՆՋՆԵՐՍ

Ահա ականջներս, որոնցով ձայներ են որսում: Ականջներս ձագարի պես ձայները հավաքում, փոխանցում են **թմբկաթաղանթին**: Թմբկաթաղանթը՝ տատանվելով, դրանք փոխանցում է երեք փոքրիկ ոսկրիկների, սրանք էլ՝ խխունջանման **ներքին ականջին**, որտեղից էլ **լսողական նյարդով** ձայները հասնում են ուղեղիս:





Գիտե՞ս, որ հավասարակշռության օրգանները, որոնք քեզ թույլ են տալիս մեկ ոտքի վրա կանգնել կամ քայլել գերանի վրայով, գտնվում են քո ներքին ականջներում:



Կարո՞ղ ես հիշել.

- Ո՞րն է քո լսած ամենաբարձր աղմուկը:
- Ո՞րն է քո լսած ամենահաճելի ձայնը:
- Ի՞նչ ձայնից ես առավոտյան արթնանում:
- Ո՞ր ձայնն է քեզ վախեցնում:
- Ո՞ր ձայնն է հանգստացնում:
- Կարո՞ղ եմ ձայներն զգուշացնել վտանգների մասին:

Օրինակներ քեր:




ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Փակիր աչքերդ և ողջ ընթացքում փակ պահիր:
- Լսիր ուսուցչին: Նա տարբեր առարկաների կհարվածի:
- Փորձիր կռահել՝ ի՞նչ ձայն էր:



ԿՈՒՅՐԵՐԻ ԿԱՐԾԻԸ

Օրը ցերեկով
Երեք-չորս հոգով
Կույրերը եկան
Փղին դեմ ընկան:
Մեկը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,
- Յե՛յ, զգու՛յշ, կանչեց, մի պատ կա՝ այստեղ:
Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝
- Ի՛նչ պատ, ծիծաղեց, էն կոճղ է կարծեմ:
Երրորդի ձեռը կնճիթն էր ընկել.
- Օձ է, օձ, գոռաց, էլ ի՛նչ եք կանգնել:
Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած
Քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.
Վա՛հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք,
Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թուկ:



- Չէ, պատ է, - չէ, օձ է, - չէ, թույ ...:

Ու աղմկելով ամեն մեկը ջուկ,

Ինչպես որ եկել

Դեմ էին ընկել,

Այնպես էլ կույր-կույր ետ դարձան կրկին,

Սարի պես փիղը պարզ լույսի տակին:

Հովհաննես Թումանյան



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ա) Հայելու մեջ ուշադիր զննի՛ր բիբերդ: Աչքերդ փակի՛ր ու ձեռքերով ծածկի՛ր: Հաշվի՛ր մինչև հարյուրը, ապա բաց արա ու նորից նայի՛ր հայելու մեջ: Բիբերդ ինչպե՞ս են փոխվել:

բ) Նայի՛ր վառվող լամպին: Հաշվի՛ր մինչև հարյուրը, ապա նորից նայի՛ր բիբերդի. ինչպե՞ս են փոխվել:

Դիտարկումներիդ մասին պատմի՛ր ընկերներիդ:





ՔԻԹՍ

Ահա քիթս, որով շնչում եմ ու մայրիկիս պատրաստած կարկանդակի անուշ հոտն եմ առնում: Բույրերն ու օդը քիս երկու **քթանցքներով** ներս եմ մտնում: Օդը նախ քիս ներսում տաքանում է, ապա՝ հասնում թոքերիս: Բույրն էլ քթովս հասնում է ուղեղիս:

ԲԵՐԱՆՍ ՈՒ ԼԵԶՈՒՄ



Ահա բերանս: Բերանով ուտում եմ, խմում ու խոսում: Մեկ-մեկ էլ, երբ հարբուխ ունեմ, բերանով շնչում եմ: **Լեզուս** շարունակ զբաղված է՝ օգնում է, որ խոսեմ: Օգնում է, որ ուտեմ:

Ի՞նչ վատ կլիներ, եթե մրգերի, պաղպաղակի, մայրիկի համեղ ճաշերի համը չզգայինք, չէ՞: Լեզվիս վրա բազմաթիվ համզգաց **բջիջներ** կան, որոնք էլ օգնում են, որ համերն զգամ: Այդ համերն էլ են **նյարդներով** ուղեղիս հասնում:



1. Հոտառությունը և ճաշակելիքը (համի զգացողությունը)

- մեզ զգուշացնում են վտանգների մասին:
Ինչպե՞ս կիմանաս, որ՝

հրդեհի վտանգ կա,



գազի արտահոսք կա,



սննդամթերքը փչացած է:




- մեզ նաև բավականություն են պատճառում:
Կարո՞ղ ես օրինակներ բերել:

Գրիպի, հարբուխի ժամանակ,
երբ հոտառությունն
անհետանում է, սնունդն
անհամ է թվում:



2. Նայի՛ր լեզվի «քարտեզին»: Տեսրո՞ւմ գրի՛ր չորս հիմնական համերը, դիմացը՝ այն ուտելիքները, որ այդ համից ունեն:



Ի՞նչ ես կարծում, ինչու՞ ենք ավելի սիրում պաղպաղակը լիզելով ուտել:



3. Ինչպե՞ս ես հասկանում ասույթները.

- Պահպանել աչքի լույսի պես:
- Ականջին օղ անել:
- Ականջները սրել:
- Բերանի համն իմանալ:
- Քիթն ամեն բանի մեջ մտցնել:
- Երկար լեզու ունենալ:


Կարո՞ղ ես մի քանիսն էլ ինքդ ավելացնել:





4. Խմբով որևէ միրգ կամ բանջարեղեն ընտրե՛ք և փորձե՛ք նկարագրել դրա մասին առանձին զգայարաններով ստացած տեղեկությունները: Օրինակ՝

խնձոր.



շոշափելիս ինչպիսի՞ն է՝ ողորկ է, գնդաձև է, վերևից և ներքևից փոսիկներ ունի, մեկում պոչիկ կա...
 Ի՞նչ տեսք ունի՝ կարմրաթուշ է, կլոր է, փայլուն է...
 Ի՞նչ հոտ ունի՝ անուշաբույր, հաճելի, ախորժելի...
 Ի՞նչ համ ունի՝ հյութալի, քաղցր, մի քիչ թթվաշ...
 Կտրելիս կամ կծելիս ի՞նչ ծայն է հանում՝ խըճթ, ճըճթ...

Նկարագրությունները հերթով կարդացե՛ք դասընկերներին, իսկ նրանք թող փորձեն կռահել, թե խոսքն ինչի մասին է:




5. Խոսե՛ք ձեր տպավորությունների մասին.

- Ի՞նչն էր դժվարացնում կռահելը:
- Ինչպե՞ս էիք կռահում:





ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ




Գծերով ցույց տուր, թե պատկերվածներից որի համը լեզվի ո՞ր մասով է ավելի լավ զգացվում:

դեղահաբ





պանիր



կիտրոն



կոնֆետ





ՄԱՇԿԸ

Մաշկը մարմինը դրսից ծածկող կարևոր օրգան է:

Մաշկը գույնի բջիջներ ունի, դրանից էլ մարդիկ լինում են թուխ կամ ցորնագույն, սպիտակամաշկ ու պեպենոտ: Այդ բջիջները մեզ պաշտպանում են արևի կիզիչ ճառագայթներից: Նկատե՞լ եք, որ մարդ որքան սպիտակամաշկ է, այնքան հեշտ է վնասվում արևից:

Մաշկն օգնում է, որ մարմնի ջերմաստիճանը կարգավորվի: Մաշկի վրայի փոքրիկ անցքերով քրտինքը դուրս է գալիս և գոլորշիանալով՝ հովացնում է մեզ, իսկ ցրտից մաշկը կծկվում է, այդ անցքերը փակվում են, և ջերմությունը չի հեռանում մարմնից:

Մաշկն ունի արյունատար անոթներ: Մաշկն ունի նյարդեր, որոնցով զգում ենք. այն շոշափելիքի օրգանն է: Դրանով ենք զգում ցուրտն ու տաքը, կոշտն ու փափուկը, անհարթն ու ողորկը:

Մաշկը պաշտպանում է վնասվածքներից: Երբ կտրվում, քերծվում կամ այրվում է՝ ցավ ենք զգում:





1. Կարդացե՛ք իրավիճակները



**ԿՏՐՎԱԾՔ,
ՔԵՐԾՎԱԾՔ**

Արեգը բռնոցի խաղալիս
վայր ընկավ սուր քարին և
ծունկը վնասեց:

ԱՅՐՎԱԾՔ

Հասնիկն
ուզում էր թեյ
խմել և ան-
զգուշաբար
եռման ջուրը
թափեց ծեռքին:



ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Տիգրանն
այնքան երկար
էր ձնագնդի
խաղացել, որ
ծեռքերը ցրտա-
հարվել էին:

ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ



Անահիտը լողափին երկար
մնացել էր արևի տակ և
արևահարվել:



2. Առանձնացրե՛ք յուրաքանչյուր վնասվածքի դեպ- քում առաջին օգնության քայլերը և դասավորե՛ք ըստ հերթականության:

Նախ՝ արագ հեռացնել հագուստը: **Ցրտահարվածին** տեղափո-
խել տաք վայր: **Քերծվածքը** լվանալ, չորացնել, սպեղանի դնել և
վիրակապել: **Արևահարվածին** տեղափոխել հով, ստվերոտ տեղ:
Ցրտահարված մասերը չի կարելի կտրուկ տաքացնել: **Կտր-**
վածքի շուրջը յոդ քսել և վիրակապել: **Ապա՝** գլխին և մարմնին
սառը թրջոցներ դնելով՝ **հովացնել**: Հետո երկար պահել սառը ջրի
տակ: Սառած մասերը տաքացնել մարմնի ջերմությամբ: Վերջում
մաքուր գործվածքով թույլ վիրակապել: **Այնուհետև կումերով**
սառը ջուր կամ հյութ խմեցնել: **Տաք, քաղցր** հեղուկ տալ խմելու:





Հիշե՛ք. օգնության առաջին քայլերից հետո պետք է դիմել բժշկի: Հիշու՞մ եք շտապօգնության համարը՝ 1-03:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առաջին բուժօգնություն

Նախօրոք բերված համապատասխան բժշկական պարագաներն օգտագործելով՝ դերախաղով դասարանին ներկայացրեք ձեր խմբին հանձնարարված վնասվածքի դեպքում առաջին օգնության քայլերը:

1 – ին խումբ Պատկերացրե՛ք, թե ձեր ընկերն ընկել է ու արմունկը քերծել:	2 – լո խումբ Պատկերացրե՛ք, թե ձեր ընկերոջ ձեռքին եռման ջուր է քափվել:
3 – լո խումբ Պատկերացրե՛ք, թե ձեր ընկերոջ ձեռքերը ցրտահարվել են:	4 – լո խումբ Պատկերացրե՛ք, թե ձեր ընկերն արևահարվել է:





Գուշակի՜ր բաց թողած բառերը և լրացրու խաչբառը:

			1			2						
					3							
4												
									5			
6			7									

1. Մաշկով զգում ենք կոշտն ու փափուկը, անհարթն ու ողորկը.
այն _____ ի օրգան է:
2. Մաշկն ունի _____ անոթներ:
3. Մաշկն ունի _____, որոնցով զգում ենք:
4. Մաշկի՜ գույնի _____ ից մարդիկ լինում են թուխ,
սպիտակամաշկ կամ պեպեմուտ:
5. Մաշկով նաև զգում ենք ցուրտն ու _____ ը:
6. Մաշկի միջոցով կարգավորվում է մարմնի _____ ը:
7. _____ ը մարմինը դրսից ծածկող կարևոր օրգան է:

պատասխաններ.

1. ժվլգփոշսշ
2. մոտոռոյսմո
3. մզնմոնց
4. մզոծվծմ
5. ծոտ
6. ցոջվտոռոջմզծ
7. կշոռ



ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ԴԱՍԱՐ



1. Նկարների փոխարեն բառեր տեղադրելով՝ կարողացե՛ք հեքիաթը և պատասխանե՛ք հարցերին:

ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՅԱՋՆԸ ԴՅՈՒՑԱՋՆ ԴԱՐՁԱՎ

Կար-չկար, մի արքայազն կար: Արքայազնը ամենից շատ քաղցրեղեն էր սիրում: Նախաճաշին  էր ուտում, ճաշին՝ քաղցր , ընթրիքին՝ : Շուտով գիրացավ, դարձավ դանդաղաշարժ ու հիվանդոտ: -ը ցավում էին, -ը վատ էին տեսնում, թե զրոսանքի դուրս գար՝ ամեն հինգ քայլը մեկ պիտի նստեր, հանգստանար, որ շունչը տեղը բերեր:

Հարևան թագավորությունում էլ մի գեղեցկուհի էր



ապրում: Նրա հետ ամուսնանալու համար արքայազնը պետք է մրցեր ու հաղթեր ուրիշ արքայազունների:

Առաջինը նշանառության մրցումն էր. մրցակիցները պիտի հեռվից նետ-աղեղով  -ը ճյուղից վայր գցեին: Իսկ արքայազնը  -ը չէր էլ տեսնում, էլ ինչպե՞ս նշան բռներ: Հասկացավ, որ չի կարող հաղթել ու շատ տխրեց: Մեկ էլ, որտեղից

որտեղ, նրան մի  մոտեցավ ու մի շիշ տվեց, որ միջինը խմի:

- Սա ի՞նչ է, - հարցրեց արքայազնը:

-  -ի հյուսք է, որ լավ տեսնես, - պատասխանեց  -ը:

Խմեց, քե չէ՝   -ն ասես բացվեցին, սկսեց պարզ տես-

նել, բայց ի՞նչ օգուտ, եթե ուժ չունեն, որ աղեղը ձգեր:

- Ա՛ռ, սա էլ խմիր, - մի ուրիշ շիշ պարզեց  -ը, -

 -ի հյուսք է, քեզ ուժ ու եռանդ կտա:

Հետո տարբեր



տվեց. դրանցից մեկը ոսկրերն ու




-ն էր ամրացնում, մյուսը օգնում էր, որ հասակ առնի,



երրորդը միտքն էր սուր դարձնում... Այսպես՝



-ի խորհրդին

հետևելով և  -ին ու մաքուր օդին մարզվելով՝ արքայազնը

փոխվեց, դարձավ ուժեղ, սլացիկ ու սրամիտ: Իհարկե, նա

հաղթեց մրցույթը,  -ը սիրահարվեց նրան, ու միասին

ապրեցին երջանիկ՝ մինչև խոր ծերություն:



- Ձեր կարծիքով՝ արքայազնը ինչի՞ց էր գեր ու հիվանդոտ դարձել:
- Ի՞նչ պետք է շատ ուտենք, որ լավ տեսողություն ունենանք:
- Ի՞նչ պետք է ուտենք, որ ամրաման մեր ոսկորներն ու ատամները:
- Ի՞նչ պետք է ուտենք, որ եռանդ և ուժ ունենանք:

2. Արքայազնը այսուհետև պատին մի աղյուսակ էր փակցրել ու մեջը նշումներ էր անում, որ չմոռանա հետևել առողջ ապրելակերպի սովորություններին: Աղյուսակին նայելով՝ փորձե՛ք ասել. առողջ լինելու համար ի՞նչն է կարևոր:



	Երկ.	Երեք.	Չորեք.	Հինգ.	Ուրբ.	Շաբ.	Կիր.
9-10 ժամ քնել եմ:							
Առավոտյան լվացվել եմ:							
Նախաճաշել եմ:							
Ատամներս մաքրել եմ:							
Մաքուր օդին զրոսնել եմ և մարզվել:							
Տուն գալով՝ շորերս փոխել ու լվացվել եմ:							
Կեսօրին ճաշել եմ:							
6 բաժակ հեղուկ եմ խմել:							
Նստելիս և քայլելիս մեջքս ուղիղ եմ պահել:							
Երեկոյան ընթրել եմ:							
Ցնցուղ եմ ընդունել:							
Քնելուց առաջ ատամներս մաքրել եմ:							

- Դու՞ ինչ ես անում, որ առողջ լինես:
Ինքդ էլ նման աղյուսակ կազմիր, փակցրու պատին և
հետևիր առողջությանդ:




3. Ի՞նչ եք կարծում՝ մաքրությունը նշանակություն ունի՞ առողջության համար: Ստաժենք միասին.

- Ի՞նչ կլինի, եթե ձեռքերը մաքուր չպահենք:
- Ի՞նչ կլինի, եթե ատամները չմաքրենք:
- Ի՞նչ կլինի, եթե չլողանանք:
- Ի՞նչ կլինի, եթե շրջապատը կեղտոտ լինի:



4. Նկարներից կռահի՛ր համապատասխան բառերը և տեղադրելով՝ կարդա՛ առողջության կանոնները.

- Վատ լուսավորված սենյակում մի  կվնասես տեսողությունդ:
- Հաճախ լողացիր և  մաքրիր:
- Քնելուց առաջ և առավոտյան  :
- Ատամներով  մի՛ կոտրիր:
- Եղունգները շատ խորը  չի՛ կարելի:
- Չափազանց բարձր աղմուկը վնաս է  :
- Զուգարանից հետո, ուտելուց առաջ ամեն անգամ
օճառով  :
- Աշխատի՛ր  միշտ նույն ժամերին:
- Կեղտոտ  -ից կամ  -ից
 կարող են բորբոքվել:
- Քո  ու  ուրիշին մի՛ տուր:



- Քնելուց առաջ



ննջարանը:

- Ակտիվ շարժվելով՝



մաքուր օդին:

- Առավոտյան



կատարի՛ր:

-



մի՛ կարդա՝ տեսողությունդ կվճասես:



5. Տեսնենք՝ լա՞վ ես հիշել առողջության կանոնները: Գնդակը նետի՛ր ընկերներիցդ մեկին ու առողջության որևէ կանոն ասա՛: Բռնողն, իր հերթին, թող մեկ այլ կանոն ասի ու նետի գնդակը: Խաղացե՛ք այնքան, մինչև հիշեք առողջ լինելու բոլոր կանոնները:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Առողջ ապրելակերպի սովորությունների աղյուսակ կազմի՛ր և նշումներ արա: Հաջորդ դասին ներկայացրու՝ ընկերներիդ: Համեմատե՛ք, քննարկե՛ք:



ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



- Ձեր կարծիքով՝ ի՞նչ է վնասակար սովորությունը:
- Ի՞նչ վնասակար սովորություններ գիտեք:



1. Կարդացե՛ք պատմությունը և գտե՛ք, թե Տիգրանն ինչ վնասակար սովորություններ ուներ.

Տիգրանը զարթուցիչի ծայնը չլսեց, որովհետև անկողնում **պառկած** երկա՛ր **կարդացել էր** և շատ **ուշ էր քնել**: Երբ աչքերը բացեց ու ժամացույցին նայեց՝ սարսափեց:

- Ուշացա, - բղավելով **մի կերպ շորերը վրան գցեց, գրքերն արագ լցրեց պայուսակն** ու վազեց դպրոց:

Մուտքի մոտ հարևանի շնիկին տեսավ:

- Ինչ լա՛վն ես, - ասաց նա, **շոյեց շնիկին** ու, քանի որ չէր հասցրել նախաճաշել, գրպանից **խնձորը հանեց, որ ճանապարհին ուտի**:

Մի կերպ, շնչասպառ, ներս ընկավ դասարան: Ուսուցչուհին տնային աշխատանքներն էր ստուգում: Ա՛յ քեզ բան. տեսորը տանն էր մոռացել:

- Այս անգամ ներում եմ, - ասաց ուսուցչուհին, - բայց, եթե դասդ սովորել ես, արի՝ գրատախտակի մոտ:



Տիգրանը, գրատախտակի մոտ կանգնած, **եղունգներն էր կրծում**։ դասը բոլորովին չէր հիշում։ Իհարկե, «երկուս» ստացավ։

Տիսուր տուն հասավ, բայց որոշեց, որ ժամանակ շատ կա՝ դասերը հետո կսովորի։ **Մի բրդուն վերցրեց ու վազեց բակ, որ խաղալով ուտի**։

Երեկոյան, երբ բակից տուն եկավ, մի բան կերավ, հեռուստացույց նայեց ու գնաց իր սենյակ։ Մի մեծ **շոկոլադ վերցրեց, անկողին մտավ** ու կծելով, անկողնում **պառկած՝ դասագիրքը բացեց**։ Կարդաց, կարդաց, բայց աչքերն սկսեցին ցավել, համ էլ հոգնած էր։ Այդպես էլ, գիրքը ձեռքին քնեց... Իսկ երբ առավոտյան արթնացավ, փորն այնպես էր ցավում, որ էլ ի՞նչ դպրոց, ի՞նչ բան...



- Տիգրանն ինչու՞ «երկու» ստացավ։
- Տիգրանի աչքերն ինչու՞ ցավեցին։
- Տիգրանի փորն ինչու՞ ցավեց։



2. Մտածե՛ք միասին

- Երբևէ որևէ սովորությունից փորձե՞լ եք ազատվել։ Ինչպե՞ս։
- Ինչու՞ է դժվար սովորությունները հաղթահարելը։
- Դրանք հաղթահարելու համար մարդու ո՞ր հատկանիշն է կարևոր։
- Կյանքում էլ ե՞րբ է օգնում կանքի ուժը։





3. Վերցրե՛ք մեկ իրավիճակ-քարտ և խմբով քննարկելով՝ ներկայացրե՛ք, թե նկարագրված սովորությունն ինչու՞ է վատը համարվում, ինչպիսի՞ հետևանքներ այն կարող է ունենալ:

Իրավիճակներ

1.

Սովորություն ունեն եղունգներս կրծել:
Հասկանում եմ, որ տգեղ է, բայց չգիտեմ՝ ինչպես ազատվեմ այդ սովորությունից:

2.

Հայրիկս ասում է, որ գիտի՝ ծխելը վատ է, բայց չի կարողանում թողնել:

3.

Դպրոցից ուշանում եմ, բայց դեռ պայուսակս չեմ դասավորել: Վերարկու՞ս ուր է: Տետրս չեմ գտնում:

4.

Ամեն անգամ, երբ դպրոցից տուն եմ գալիս, այնքան քաղցած եմ լինում, որ մոռանում եմ ուտելուց առաջ ձեռքերս լվանալ:



4. Փորձե՛ք մտածել, թե ինչպես կարելի է հաղթահարել վնասակար սովորությունը կամ փոխարինել անվտանգով: Ձեր առաջարկները ներկայացրե՛ք դասարանին:



ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՑ



1. Կարդացե՛ք պատմություններն ու պատասխանե՛ք հարցերին:


1. Վարդանիկն ու Արևիկը դուրս էին եկել զբոսանքի: Հանկարծ եղանակը փչացավ. սև-սև ամպեր հավաքվեցին ու տեղատարափ անձրև սկսվեց: Երեխաները ոտքից գլուխ թռչվեցին, բայց տուն գնալ չէին ուզում... Երեկոյան երկուսի կոկորդն էլ սկսեց ցավել, սկսեցին փռշտալ, հազալ...



- Երեխաներն ինչու՞ հիվանդացան:
- Ի՞նչ պիտի անեին, որ չհիվանդանային:



2. Հորոսիկ ու Հաբիլո փոքրիկ թզուկներն ամբողջ օրը խաղացին, մինչև սովածացան: Մեկ էլ աչքներն ընկավ խնձորենուն: Խնձորները դեռ խակ էին, բայց քաղցած ժամանակ խակ-հասած չես հարցնում... Գնդակը մի կողմ նետեցին ու սկսեցին ծառից խնձոր քաղել և ագահաբար խփշտել... Երեկոյան, երբ տուն եկան, այնպիսի փորացավ սկսվեց...



- Ի՞նչն էր թզուկների փորացավի պատճառը:
- Առողջության ի՞նչ կանոններ չգիտեին նրանք:

3. Փոքրիկ Մարիամիկը հիվանդացել էր: Քիթը հոսում էր, մարմինը կոտրատվում էր, ջերմություն ուներ: Բայց հաջորդ օրն առավոտյան, հենց մայրիկն աշխատանքի գնաց՝ Մարիամիկին թվաց, թե ինքն արդեն լավ է, ու բակ իջավ, որ ընկերների հետ խաղա: Շատ էլ, թե հագնում էր ու փռշտում... Մի երկու օրից, երբ առողջացել էր, տեսավ, որ բակում ոչ ոք չկա. հիմա էլ ընկերներն էին հիվանդացել...





3. Գտե՛ք նախադասությունների մասերը և կարդա-
ցե՛ք, թե հիվանդ ժամանակ ինչ կանոնների պետք
է հետևել, որ չվարակեք ձեր ընկերներին և շուտ
առողջանաք:

Եթե ջերմություն ունեք՝ ծածկեք թաշկինակով կամ ձեռքով:
Հյութեր, թեյ շատ խմեք. հեղուկը նշանակած դեղերը: Փռչտալիս
կամ հազալիս բերանը մի՛ գնացեք, ընկերների հետ մի՛
խաղացեք: Անպայման խմե՛ք բժշկի կոգնի օրգանիզմից
հեռացնել վնասակար նյութերը և կիջեցնի ջերմությունը: Քանի
դեռ չեք լավացել՝ դպրոց կամ հյուր պառկե՛ք անկողնում, վեր մի՛
կացեք:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Նշանների փոխարեն տառերը տեղադրեք և կկարդաք
ասացվածքը: Բացատրեք՝ ինչպե՞ս եք հասկանում:









Գ Լ ՈՒ Խ Ը Ա Ր Կ



Ձ Դ Ս Է Պ Ն Ե Հ





- Ինչու՞ է դժվար մենակ լինելը:
- Ե՞րբ ենք օգնության կարիք զգում:
- Ինչպե՞ս եք հասկանում «Մի ձեռքը ծափ չի տա» ասացվածքը:

- Ի՞նչն եք կարևոր համարում ընկերության համար:
- Ովքե՞ր կարող են լավ ընկեր լինել՝ տղանե՞րը, թե՞ աղջիկները: Բացատրեք:
- Ինչու՞ է կարևոր հասկանալ, թե դիմացինն ինչ է զգում:
- Ինչպե՞ս կարող ենք խոսափել վեճերից:

- Ո՞ր հատկություններն են կարևոր ուզածին հասնելու համար:
- Ինչո՞վ է տարբերվում գործը ժամանցից:



Փորձե՛ք բացատրել և հիմնավորել ասացվածքները.

- Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:
- Այսօրվա մի կուրճ¹ վաղվա տապը կխնայի:

- Ինչո՞վ է մեր մարմինը նման աշխատող մեքենայի: Թվարկե՛ք մարմին-մեքենայի մասերը:
- Ի՞նչն ենք անվանում մարմնի հենարան: Ինչու՞:
- Ի՞նչ անենք, որ առողջ ու ամուր ատամներ ունենանք:

¹ կուրճ – մեկ փոքրիկ կար



Սնունդը մարմնի շինանյութն է: Բացատրե՛ք:

• Ինչու՞, երբ կիտրոն ենք տեսնում, անմիջապես թթվաշ համը պատկերացնում ենք: Էլի նման օրինակներ բերե՛ք:

Թվարկե՛ք մեր զգայարանները: Նրանցից որն ինչպե՞ս է օգնում, որ ճանաչենք աշխարհը:



Ի՞նչ պիտի անենք առողջ լինելու համար: Թվարկե՛ք:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այն ի՞նչն է, ինչն

Մի մացառուտ գիտեմ՝
Տակը՝ բացատ,
Բացատի տակ՝ մի զույգ փետուր,
Փետուրների տակ՝ մի զույգ լճակ,
Լճակների տակ՝ երկծակ զուռնա,
Զուռնայի տակ՝ մի մուր մարագ,
Մարագի մեջ՝ լիքը ուրագ:

Սրբազան Գրքի խոսքով՝
'Սբազան Գրքի խոսքով՝
'Սբազան Գրքի խոսքով՝
'Սբազան Գրքի խոսքով՝

Աշխարհի մեջ սրանք հեշ,
Բայց աշխարհն է իրենց մեջ:

վզձիղ

Կարմիր աման բրնձով լիք,
Մեջը՝ խոսող ոսկե ձկնիկ:

լսեցի դ ցոլվեց

Ասում են՝ եկե՛ք, եկե՛ք,
Չեն գալիս:
Ասում են՝ մի՛ եկեք, մի՛ եկեք,
Գալիս են:

վզիցիցից

Ոչ թուր եմ ես,
Ոչ մուր եմ ես,
Բայց խոցում
ու մրում եմ ես:

լսեցի

Միասին են նրանք ծնվել
Ու միասին ճամփա ընկել:
Մեկը խոսում, բայց չի լսում,
Մյուսը լսում, բայց չի տեսնում,
Մեկն էլ՝ տեսնում ու չի խոսում:

ժՅՄ 'ձցոկոՄ 'լսեցի




Մեկնաբանե՛ք ասույթները.

- Մարդ ուտում է, որ ապրի, այլ ոչ՝ ապրում, որ ուտի:
- Որ առողջ, խելոք ու հարուստ դառնաս, պետք է շուտ քնես ու վաղ արթնանաս:

ԴԱՍ 1


ԵՐԿՆՔՈՒՄ ՄԻ ԱԿԱԶԱՅԱՏԻԿ



ԾԻՐ ԿԱՔԻՆ ԿԱՄ ԶԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՅ


Տիեզերքում բյուրավոր աստղերի և մոլորակների հսկայական խմբերը կոչվում են **գալակտիկաներ**: Մեր Երկիրը գտնվում է **Ծիր Կաթին** կամ **Զարդագողի ճանապարհի** կոչվող գալակտիկայում:

Ծիր Կաթինում բյուրավոր աստղեր կան: Աստղերը բոլորն էլ արևներ են, բայց այնքան հեռու են, որ մեզ լույսի կետիկներ են թվում: Դրանցից ամենամոտեն Արեգակն է: Արեգակը Երկիր մոլորակին ջերմություն և լույս է տալիս:



Երկիրը պտտվում է Արեգակի շուրջ: Այն **Արեգակի** շուրջ պտտվող ութ¹ մոլորակներից մեկն է:

Ուղին, որով մոլորակները պտտվում են Արեգակի շուրջ, կոչվում է **ուղեծիր**: Ժամանակը, որի ընթացքում մոլորակը ուղեծրով մեկ պտույտ է կատարում, կոչվում է **տարի**:




ԵՐԿԻՐԸ

Երկիրը միայն Արեգակի շուրջը չի պտտվում: Այն հուլի պես պտտվում է նաև իր երևակայական **առանցքի** շուրջ, որն անցնում է **հյուսիսից հարավ՝ Երկրի կենտրոնով**: Երկիրն իր առանցքի շուրջը մեկ օրում մեկ պտույտ է կատարում՝ մերթ մի կողմով շրջվելով դեպի Արեգակը, մերթ՝ մյուս:

¹ 2006 թվականին գիտնականները պարզեցին որ Պլուտոնը, որն առաջ նույնպես մոլորակ էր համարվում, մոլորակ չէ:

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌ



ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌ



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լապտերի լույսն ուղղե՛ք գլոբուսի վրա և պտտեցրե՛ք գլոբուսը: Պատկերացրե՛ք, թե լապտերն Արեգակն է:

- Ինչու՞ Երկրի տարբեր մասերում մերթ գիշեր է լինում, մերթ՝ ցերեկ:
- Այսօրվանից մինչև եկող ամսվա 1-ը Երկիրն իր առանցքի շուրջը քանի՞ պտույտ կկատարի: Բացատրեք:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Կարո՞ղ ես սովորածը հիշելով պատասխանել հարցերին:


- Երկիրը քանի՞ օրում է մեկ պտույտ կատարում Արեգակի շուրջը:
- Ո՞ր մոլորակի տարին է ամենաերկարը: Իսկ ամենակա՞րճը: Ինչու՞:
- Ձեր ծնվելու տարվանից հաշված՝ եկող տարի ձեր ծննդյան օրը Երկիրն Արեգակի շուրջ քանի՞ պտույտ կատարած կլինի: Ինչու՞:



ԵՐԿԻՐՆ ՈՒ ԼՈՒՄԻՆԸ




Հին հույն մաթեմատիկոս Պյութագորասը, հորիզոնում նավերի հայտնվելը դիտելով, նկատեց, որ սկզբում երևում են միայն նավի կայմերը, իսկ հետո, երբ ավելի է մոտենում, նավն ամբողջությամբ:





- Ի՞նչ հասկացավ Պյութագորասն իր տեսածից:
- Ինչու՞ ենք մեր մոլորակը երկրագունդ անվանում:

Երկիրն ունի ձգողական ուժ



- Ինչու՞ են ձեռքից բաց թողած իրերը ցած ընկնում:



ԼՈՒՍԻՆԸ

Լուսինը **տիեզերքի** մեր ամենամոտ հարևանն է: Այն Երկրի **արբանյակն** է՝ պտտվում է Երկրի շուրջը: Երկրի շուրջ իր պտույտի ընթացքում Արևի լույսը նրա տարբեր մասերն է լուսավորում: Այդ պատճառով էլ մենք այն մերթ մահիկի, մերթ կիսաշրջանի, մերթ էլ շրջանի տեսքով ենք տեսնում՝ կախված այն բանից, թե նրա ո՞ր մասն է լուսավորված: Եվ այդպես էլ անվանում ենք՝ նորալուսին, կիսալուսին, լիալուսին:




Լուսնի փուլերը

Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր, ոչ էլ քամիներ են լինում: Այդ պատճառով էլ այնտեղ գրեթե ոչինչ չի փոխվում: Այսինքն՝ մեզանից շատ տարիներ հետո Լուսին այցելողներն էլ այն կտեսնեն նույնպիսին, ինչպիսին որ հիմա է:



- Ի՞նչ կուզենայիք մեր մասին պատմել մեզանից շատ տարիներ հետո Լուսին այցելած մարդկանց:
- Պատկերացրե՛ք, թե ծանրոց եք պատրաստելու, որը թողնելու եք Լուսնի վրա, որպեսզի ապագայի մարդիկ իմանան մեր մասին: Ի՞նչ կդնեք ծանրոցի մեջ: Ինչու՞:

1. Գտե՛ք նախադասություններում բաց թողած բառերը և լուծե՛ք խաչբառը.



1. Երկիրն Արեգակից հաշված երրորդ _____ ն է:
2. _____ ը Երկրի ամենամոտ հարևանն է տիեզերքում:
3. Բյուրավոր աստղերի և մոլորակների հսկայական խումբը կոչվում է _____:
4. _____ ը մեզ լույս և ջերմություն է տալիս:
5. Արեգակը Երկրին ամենամոտ _____ ն է:



6. Երկրի՝ առանցքի շուրջը կատարած պտույտի ժամանակ Արեգակին չնայող մասում _____ է լինում:
7. _____ ը մոլորակների՝ Արևի շուրջը շարժվելու ուղին է:
8. Երկիրն իր երևակայական _____ ի շուրջը մեկ օրում մեկ պտույտ է կատարում:
9. Որքան ավելի մոտ է մոլորակն Արևին, որքան կարճ է մոլորակի ուղեծիրը, այնքան կարճ է նրա _____ :
10. Երկրի այն մասում, որը շրջված է դեպի Արեգակը, _____ է լինում:
11. _____ ը մարդկանց հայտնի միակ մոլորակն է, ուր կյանք կա:
12. Լուսինը Երկիր մոլորակի _____ ն է:




Պատկերացրե՛ք, թե
հեռավոր գալակտիկայի
բնակիչը մեր մոլորակի
հասցեն է հարցնում:
Ի՞նչ հասցե կտաք:

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



ԴԱՍ 1

ԵՂԱՆԱԿԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ



Երկրի առանցքը թեք է, և Արեգակի շուրջ ճամփորդելիս այդ թեքությունը չի փոխվում, դրա համար էլ մերթ Զարավային բևեռն է հակված դեպի Արեգակը, մերթ էլ՝ վեց ամիս հետո, Զյուսիսայինը: Երբ Զյուսիսային բևեռը հակված է դեպի Արեգակը, Զյուսիսային կիսագնդում ամառ է, Զարավայինում՝ ձմեռ, և հակառակը:

Երկրագնդի վրա կան վայրեր, ուր տարվա չորս եղանակների մեզ ծանոթ հերթագայությունը գոյություն չունի: Օրինակ՝ Երկրագնդի կենտրոնական մասում ամբողջ տարին տաք է, նույնիսկ՝ շոգ, իսկ բևեռներում այնքան ցուրտ է, որ սառույցը երբեք չի հալվում: Եթե մի վայրից մյուսը տեղափոխվես, կտեսնես՝ եղանակը փոխվում է: Օրինակ՝ ծովին մոտ վայրերում եղանակը մեղմ է, լեռներում՝ որքան բարձր, այնքան ցուրտ:

Եղանակից կախված՝ փոխվում են բնությունը և բնակավայրերի տեսքը: Բույսերն ու կենդանիները հարմարվում են եղանակին: Հարմարվում են նաև մարդիկ՝ եղանակին հարմարեցնելով իրենց հագուստները, տները:




- Ինչու՞ են մարդիկ փորձում կանխատեսել եղանակը:





1. Նայե՛ք նկարին և փորձե՛ք ասել, թե նշված երկրներից որտեղ է ցերեկ, որտեղ՝ գիշեր, ինչպես նաև՝ որտեղ է ամառ, որտեղ՝ ձմեռ:




ՀՆՈՒՄ ԿԱՐՃՈՒՄ ԷՆ...

Շատ հին ժամանակներում մարդիկ չգիտեին, որ երկիրը պտտվում է Արեգակի շուրջը: Նրանք տարբեր պատմություններ էին պատմում, թե ինչպես են առաջացել տարվա եղանակները: Ահա դրանցից մեկը:

Վաղուց, շատ վաղուց աշխարհը կանաչ էր ու գեղեցիկ: Դեմետրան՝ հին հույների հողագործության աստվածուհին, հետևում էր, որ բույսերը կլոր տարին աճեն ու բերք տան:

Բայց մի օր ստորգետնյա աշխարհի աստված Հադեսը փախցնում է նրա դստերը՝ Պերսեփոնեին: Դեմետրան վշտից մոռանում է իր





պարտականությունները, և երկիրը դառնում է սառն ու ամայի:

Հաղեսը խղճում է Ղեմետրային և թույլ է տալիս, որ Պերսեփոնեն տարվա մի մասը երկրի վրա անցկացնի:

Ու այսպես՝ երբ Պերսեփոնեն երկիր է գալիս, Ղեմետրան ուրախանում է, իսկ աշխարհը՝ ծաղկում: Իսկ երբ վերադառնում է ստորգետնյա աշխարհ՝ բնությունը վշտանում է, ու ծմեռ է լինում:



2. Կարդացե՛ք նախադասությունները և նշե՛ք՝ փա՞ստ է, թե՞ հեքիաթ:

1. Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն և ծմեռ:
2. Երբ Ղեմետրան սգում է, երկրի վրա ծմեռ է սկսվում:
3. Քանի դեռ Հաղեսը Պերսեփոնեին չէր փախցրել, երկրի վրա կլոր տարին ամառ էր:
4. Գարնանը և ամռանը բույսերն աճում են, ծաղկում ու պտուղ տալիս:
5. Երկրի այն մասում, որ թեքված է դեպի Արեգակը, ամառ է լինում:
6. Երբ Հյուսիսային կիսագնդում ամառ է, Հարավայինում ծմեռ է:





3. Կռահե՞ք՝ ինչի՞ մասին է խոսքը.

- Արթնացե՛ք քնից,
ծաղիկներ
սիրուն,
Ձմեռն անցել է,
եկել է ... :

- Շոգ է, շոգ է, եկե՛ք
խաղանք
վարդավառ,
Չէ՞ որ վաղուց
արդեն եկել է ... :



- Ծառերը բոլոր
զուգվել են
նախշուն՝
Շոգած
անտառին
իջել է ... :

- Քուն են մտել
ծաղիկ ու
թիթեռ,
Հոգնած
աշխարհին
իջել է ... :



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Տրված բառերով պատմի՛ր, թե եղանակն ինչպես է փոփոխվում գարնանը, ամռանը, աշնանը և ծմռանը.

արևոտ, պայծառ, ամպամած, սառնամանիք, քամի, անձրև, ծիածան, ձյուն, կարկուտ, շոգ, սառույց, ամպրոպ, կայծակ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ



1. Կարդացե՛ք բանաստեղծությունը և կռահե՛ք, թե երբ է լինում.

ԱՅՂ Ե՞ՐԲ Է ԼԻՆՈՒՄ

Օրն է երկարում,
Օրն է տաքանում,
Դաշտերը ծաղկում,
Թռչունը երգում.

- Այդ ե՞րբ է լինում:

Արևն է այրում,
Յորենը հասնում,
Հասկերը լցվում.

- Այդ ե՞րբ է լինում:

Օրն է կարճանում,
Ծառը մերկանում,
Անձրև է մաղում.
- Այդ ե՞րբ է լինում:

Դաշտերը՝ սպիտակ,
Բուքն է հեծեծում,
Սառույցով ծածկված
Գետերն են լռում.
- Այդ ե՞րբ է լինում:

Ղազարոս Աղայան





2. Նայե՛ք նկարներին և պատմե՛ք, թե բնությունն
ինչպես է փոխվում տարվա տարբեր
եղանակներին: Ինչպե՞ս են մարդիկ հարմարվում շոգին, ցրտին,
ամձրևին: Հիշե՛ք անցածը. կենդանիներն ինչպե՞ս են
հարմարվում տարվա տարբեր եղանակներին:



3. Գունավոր տառերը համադրելով՝ կարդա՛ գաղտնագիրը: Ինչպե՞ս կբացատրես:

ԱԳՊՄՐԾԻԿԼՂԻՇՆԴԱԲՆՖԶՎՐՌԵԱՎ, ՍՍ
ՀԱԵՅՏԻԶՍՑԻՕՆՐԾՍԱԼՂՊԻԴԿՔՆԻԵԼՐ:

:(մզցիվևոթ ,ըվովևոց 'դմջոց ղվլվմոդ)



Եղանակը օդի ջերմաստիճանն է, տեղումները և ամպամածությունը: Եղանակի մասին իմանալն օգնում է պահպանել առողջությունը, խնամել բույսերն ու կենդանիներին:



4. Պատկերացրե՛ք և նկարագրե՛ք եղանակը.

	օդի ջերմ- աստիճանը շոգ, տաք, զով, ցուրտ	քամու ուժը ուժեղ, թույլ, չկար	տեղումները անձրև, ծյուն, կարկուտ, չի տեղացել	ամպերը ամպամած, պարզ՝ անամպ, փոփոխա- կան
Մի գարնանային օր				
Մի ամառային օր				
Մի աշնանային օր				
Մի ձմեռային օր				





Անձրևը, ձյունը, կարկուտը, քամին, ծիածանը, ամպրոպը, կայծակը բնության երևույթներ են:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Լրացրու՝ աղյուսակը՝ մինչև հաջորդ դասն ամեն օր գրանցելով, թե ինչպիսին էր եղանակը:

	օդի ջերմ- աստիճանը շոգ, տաք, գոլ, ցուրտ	քամու ուժը ուժեղ, թույլ, չկար	տեղումները անձրև, ձյուն, կարկուտ, չի տեղացել	ամպերը ամպամած, պարզ՝ անամպ, փոփոխա- կան
Երկուշաբթի				
Երեքշաբթի				
Չորեքշաբթի				
Հինգշաբթի				
Ուրբաթ				
Շաբաթ				
Կիրակի				



ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ



1. Կարդացե՛ք՝ նկարների փոխարեն բառեր տեղադրելով:

- Կռահե՛ք, թե տարվա ո՞ր եղանակի մասին է խոսքը:
- Վերնագրեք տեքստերը:
- Տեքստերից առանձնացրեք նկարագրված եղանակներին.

1 – ին խումբ բնության երևույթների և բույսերի հետ կատարվող փոփոխությունները	2 – թղ խումբ միջատների և թռչունների հետ կատարվող փոփոխությունները
3 – թղ խումբ ձկների և երկկենցաղների հետ կատարվող փոփոխությունները	4 – թղ խումբ գազանների հետ կատարվող փոփոխությունները

- Ձեր աշխատանքները ներկայացրե՛ք դասընկերներին:



Օրերը երկարում են ու տաքանում: Ձյունը դեռ չհալված՝ գլուխը հանում է քնքուշ -ը: Հետո մեկը մյուսի հետևից դուրս

են գալիս մյուս ծաղիկները՝ -ը, -ը, հիրիկը:

Հաճախ  ու  է լինում: Ծաղկում են -ը,

կանաչում են -ը:

-ն արթնացրել է -ին: Տաք երկրներից

վերադառնում են -ը, նորոգում են հին

-ը կամ նորն են շինում:  են հանում ու

խնամում նրանց:

Գազաններն աստիճանաբար փոխում են մորթին՝ թափվում են հին մազերը, դուրս են գալիս նորերը: -ի, -ի և

-ի մոտ փոխվում է նաև մորթու գույնը: Կարող ես ասել՝

ինչու՞: Քնից արթնանում են -ը, փորսուղը, -ն:




-ը ծագեր են ունենում, խնամում, կաթով
կերակրում, իսկ հետո սովորեցնում են կեր հայթայթել:

Արթնանում են  ու  և ջրերում ձվադրում:

Չվերից դուրս են գալիս փոքրիկ  , որ հետո
մեծանում՝ ցամաք են դուրս գալիս:

Քնից արթնանում են նաև  -երն ու  -ը և
բներից դուրս են գալիս՝ արևի տակ ջերմանալու:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Օձ տեսնելիս՝ զգուշացեք, մի՛ մոտեցեք,
ձեռք մի՛ տվեք: Նրանք կարող են թունավոր և շատ վտանգա-
վոր լինել:



Օրերը երկար են,  -ը բարձր է և լավ է տաքացնում:

Կարճատև տեղատարափ  ներ են լինում, անձրևից հետո,

երբեմն՝



Դաշտ ու  եր լցվում են փարթամ




ով ու մեկը մյուսին փոխարինող



ով:

Ծաղիկներից ոչ պակաս վառվելուն գույներ ունեն միջատները՝



-ը,



-ն ու



-ը: Իսկ որքան



կան: Նրանք խնամում ու կերակրում են ձվից նոր

դուրս եկած իրենց



-ին: Ձագերի խնամքով են զբաղված

նաև գազանները: Ջրերում



-ը,



-ն ու



-ը շարունակում են ձվադրել, և ձվերից դուրս են

գալիս ձկնիկներ ու շերեփուկներ:

Կամաց-կամաց



-ը սկսում է դեղնել կիզիչ

արևից:



-ին սկսում են հասունանալ



-ը:



*Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը կապույտ մանուշակ,
Մայիսին քաջվում է վարդը,
Յուլիսին է երգում անուշակ:*





*Հունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,
Օգոստոսը՝ տանձ ու խնձոր,
Եվ ուրիշ շատ հասուն մրգեր:*








1. Վերհիշե՛ք անցածը. ի՞նչ տարբերություններ կան բույսերի ու կենդանիների միջև:

Բույսեր.



Կենդանիներ



Հիշե՛ք, թե.

- ինչպես են սնվում,
- ինչի կարիք ունեն,
- ինչպես են տեղաշարժվում:



Տոնական բացիկ պատրաստիր:

1. Նրբիկ ծաղիկներ և տերևներ հավաքիր ու դիր որևէ գրքի էջերի արանքում: Գրքի վրա ծանրություն դիր:
2. Վերցրու հաստ սպիտակ կամ գունավոր թուղթ և մեջտեղից ծալիր:
3. Վերցրու նույն չափի գրելու թուղթ, ծալիր և ամրակով մեջտեղից փակցրու հաստ թղթի մեջ (տետրի գույգ էջի պես):
4. Չորացրած ծաղիկներն ու տերևները սոսնձիր հաստ թղթի երեսին և ներսի կողմն այնպես, որ գեղեցիկ փունջ, նախշ կամ պատկեր ստացվի: Կարող ես նաև ժապավենով զարդարել:
5. Նամակ կամ բարեմաղթանք գրիր նրան, ում համար պատրաստել ես բացիկը, դիր ծրարի մեջ ու նվիրիր:



ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ



1. Կարդացե՛ք՝ նկարների փոխարեն բառեր տեղադրելով:

- Կռահե՛ք, թե տարվա ո՞ր եղանակի մասին է խոսքը:
- Վերնագրե՛ք տեքստերը:
- Տեքստերից առանձնացրե՛ք նկարագրված եղանակներին.

1 – իմ խումբ բնության երևույթների և բույսերի հետ կատարվող փոփոխությունները	2 – ըդ խումբ միջատների և թռչունների հետ կատարվող փոփոխությունները
3 – ըդ խումբ ձկների և երկկենցաղների հետ կատարվող փոփոխությունները	4 – ըդ խումբ գազանների հետ կատարվող փոփոխությունները

- Ձեր աշխատանքները ներկայացրե՛ք դասընկերներին:

ԴՆ Երևույթներ

Օրերը կարճանում են, և սկսում է ցրտել:



փոխարինում են



ին հասունացած



-ը:



ը դառնում են



: Տերևաթափ է

սկսվում: Թափվում են նաև սերմերը, որ հողում սպասեն տաք

օրերի: Կանաչ են միայն



ծառերը:



-ը

մռայլվում է,



-ները հաճախանում են, երբեմն մառախուղ

է լինում:



-ի կերը պակասում է, և նրանց մի մասը

չվում է տաք երկրներ: Նախ չվում են



-ով, ապա՝

սերմերով սնվող թռչունները, իսկ վերջում, երբ սառչում են

լճերը



-ն ու



-ը: Մյուսները, որ

մնում են ծմեռելու, տաքեր կերպ են հարմարվում: Մի մասը մի-

ջատներից ու սերմերից պաշար են հավաքում, մյուսներն էլ հա-

ճախ թռչում-մոտենում են մարդկանց բնակավայրերին, որ կեր

գտնեն:



-ն ու



-ն էլ են պաշար հավաքում:



-ներն ու



-ը թաքնվում են հողի

տակ, իսկ որոշ



չվում են



-ի պես:

Ջրում



-ի մեծ մասն իջնում է խորքը, ուր ավելի

տաք է, իսկ մի մասն էլ, ինչպես և



-ը, թաղվում

են տիղմի մեջ և քուն են մտնում:

Օրերը կարճ են, գիշերները՝ երկար: Հաճախ ծյուն է տեղում:

Բայց ցուրտը չի վախեցնում



-ին՝ նրանց մորթին

ավելի է խտանում ու փարթամանում և պաշտպանում է ցրտից:

Նրանց մի մասն աշնան ընթացքում ուտելիքի պաշար է հավաքում:

Կարող են հիշել մի քանիսին:



-ը սնվում է ծառերի մանր



-ով և կեղևով:



-ը սուր հոտառություն, տեսողություն և լսողություն ունի,

ինչն օգնում է ձյան տակից լսել



-ի



2. Խոսենք ծմեռվա մասին. ինչու՞ ենք սիրում
ծմեռը, ի՞նչն է, որ այնքան էլ չենք սիրում:
Նկարագրե՛ք եղանակը, զբաղմունքները՝
օգտվելով տրված նկարներից և բառերից.

ցուրտ,



, սառույց, բուխարիկ,



, բուք, ճերմակ

ծածկոց,



, արծակուրդ,



, ձնագնդի,



, սահադաշտ,




, դահուկ, կարճ օրեր:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայրիկի կամ մայրիկի հետ ձեր տան մերձակայքում
բնության մի գեղեցիկ հատված գտեք և լուսանկարեք:
Հիշեք և տարվա մյուս եղանակներին էլ նկարեք այդ
նույն տեսարանը: Համեմատեք:



ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ԵՎ ՄԱՐԴԸ




ԿԼՈՐ ՏԱՐԻՆ

Ոչ միայն կենդանիներն ու բույսերն են հարմարվում եղանակի փոփոխություններին, այլև՝ մարդիկ: Տարվա ամեն եղանակ իր պահանջներն է թելադրում:



1. Ծանոթացե՛ք նկարներին.

- Տեսեք, թե կլոր տարին մարդիկ որքան շատ գործ ունեն անելու:
- Կարո՞ղ եք լրացնել՝ ձեր տանն ինչպե՞ս եք դիմավորում տարվա տարբեր եղանակները, ի՞նչ գործեր եք անում:
- Ո՞ր եղանակին ի՞նչ տոներ եք նշում:





Ձյունը հալվում է
թե չէ՝ դաշտերում
սկսում է եռալ աշ-
խատանքը: Մար-
դիկ սկսում են հողը
վարել, սերմեր ցա-
նել, որ հետո՝ աշ-
նանը, բերք հավա-
քեն:

Այգիներում ծառերին
դեղ են սրսկում՝ մի-
ջատներից պաշտ-
պանելու համար:

Քաղաքներում ու գյուղերում
փողոցները, այգիները կար-
գի են բերում: Ծառատունկ է
սկսվում:

որոշ մրգերի ու բանջա-
րեղենի բերքն արդեն ամ-
ռանն են հավաքում:
Հնձում են արտերը: Կո-
վերին, ոչխարներին ու
այծերին ամռանը հյուսիս
խոտով հարուստ արո-
տավայրեր են տանում:

Ամռանը խնամում են
ցանքսերը, ջրում են,
քաղհանում են մուլախո-
տերը, պայքարում են
վնասատուների դեմ,

Կերակրում են ընտանի թռ-
չուններին. խոտը, սերմերը և
միջատները, որոնցով սն-
վում են թռչունները, չեն բա-
վականացնում նրանց:

Աշնանն այգիներում սկս-
վում է բերքահավաքը:
Սկսվում է ցորենի, գարու
աշնանացանը: Բանջարա-
նոցներում գազար, մաղա-
դանոս, սամիթ են ցանում:




Մարդիկ հնձած խոտ են պահես-
տավորում, նախապատրաս-
տում են բներն ու գոմերը, որ ձմ-
ռանը կենդանիները տաք ու
կուշտ լինեն: Այգիներում թռ-
չունների համար կերակրաման-
ներ են կախում:


Վառելիքի պաշար են
անում, տաքացնում
են տները:



Խաղողի վազերը հողի տակ են
թաղում, որ ձմռանը ցրտից
պաշտպանեն: Բերք են ամբա-
րում ձմռան համար, մի մասն
էլ՝ գարնանը ցանելու համար:



Այգիներում ծառերն
առատ ջրում են, որ ձմ-
ռանը դիմանան և մյուս
տարի լավ բերք տան:



Կիր են քսում ծառերի
բներին, որ ոչնչացվեն
միջատները, իսկ նա-
պաստակները կեղևը
չկրծեն:



Ձմռանը քա-
ղաքում փո-
ղոցներն ու
մայթերը մաք-
րում են ձնից և
սառույցից:




Գյուղում ձմռանն ըն-
տանի կենդանիներին
կերակրում են, ջուր
տալիս և մաքրում:
Հետևում են, որ թռչ-
նանոցում լույս լինի,
որ հավերը ձմռանն էլ
ծու ածեն:





- Ինչպե՞ս է, որ ծաղիկները, կանաչեղենը, միրգն ու բանջարեղենը կլոր տարին կարելի է տեսնել խանութներում:
- Է՞լ ինչ են անում մարդիկ, որ ձմռանն էլ կարողանան անուշ անել ձմռան բարիքները:





Գիտե՞ք, որ կենդանիները մարդկանց պես կարող են հիվանդանալ: Նրանց առողջությանը հետևում են անասնաբույժները:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Լրացրու՝ աղյուսակը. տարվա ո՞ր եղանակին ո՞ր աշխատանքներն են կատարվում.

հունձ, բերքահավաք, ծառատունկ, վար, ցանքս, ոռոգում...

Գարուն	Ամառ	Աշուն	Ձմեռ



ՏԱՐԻ, ԱՄԻՍՆԵՐ, ՀԱԲԱԹՎԱ ՕՐԵՐ ԵՎ ՕՐԱՑՈՒՅՑ



Փորձենք հիշել.

- Ի՞նչ է կոչվում Արեգակի շուրջը երկրի կատարած մեկ պտույտի ժամանակը:
- Տարին քանի՞ օր ունի:

ՕՐԱՑՈՒՅՑ

Որպեսզի հեշտ լինի օրերի հերթագայությունը հիշել, մարդիկ դրանք գրի են առել և կազմել **օրացույց**: Օրացույցի մեջ տարվա 365 օրերը բաժանված են **ամիսների**.

- գարնան ամիսներն են՝ **մարտ, ապրիլ, մայիս**
- **ամռան ամիսներն են՝ հունիս, հուլիս, օգոստոս**
- **աշնան ամիսներն են՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր**
- **ձմռան ամիսներն են՝ դեկտեմբեր, հունվար, փետրվար:**

Կարո՞ղ եք ասել, թե տարին քանի ամիս ունի:

Ամիսների մի մասն ունի **31**, մյուսները՝ **30** օր: Միայն **փետրվար** ամիսն է, որ ընդամենը **28** օր ունի, իսկ **չորս տարին** մեկ՝ **29**: Այն տարին, երբ փետրվարը 29 օր ունի, մարդիկ անվանել են **նահանջ տարի**:

Օրացույցին նայելով՝ հեշտությամբ կարող ենք ասել, թե այսօր ո՞ր ամսվա ո՞ր օրն է:

Օրացույցի մեջ տարվա օրերը նաև շաբաթների են բաժանված: Տարին ունի **52 շաբաթ**, իսկ ամեն շաբաթ ունի **7 օր**: Կարո՞ղ եք թվարկել շաբաթվա օրերը:

Շաբաթվա ո՞ր օրն է, որ դպրոց չենք գալիս: Ո՞ր ամիսներին է ամառային արձակուրդը: Ե՞րբ է Նոր տարին: Ե՞րբ է ձեր ծննդյան օրը:

Հ ա ճ Ե Լ ու Կ

Մի քաղաք կա՝ 12 փողոց ունի,
փողոցներում՝ 52 տուն,
տներում՝ 7-ական մարդ:
Ի՞նչ է քաղաքի անունը:



- Կարո՞ղ եք կռահել փողոցների անունները: Իսկ տների բնակիչների՞:



1. Կարդացե՛ք Հովի. Թունանյանի բանաստեղծությունը և փորձե՛ք կռահել, թե որ ամսվա մասին է խոսքը.



Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր ուրախ օր կանի,
Վաղը անձրև ու քամի.
Առավոտը պայծառ օդ,
Կեսօրը մութ ու ամպոտ:



Մին հազնում է սպիտակ,
 Մին կանաչին է տալիս,
 Մի օր ցուրտ է, մի օր տաք,
 Մին խնդում է, մին լալիս...
 Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս:




2. Թղթի վրա գրե՛ք ձեր ծննդյան ամիսը և փակցրե՛ք կրծքին: Առանց խոսելու փորձե՛ք շարք կազմել ըստ ամիսների հերթականության՝ սկսելով հունվարից:



3. Օգտվելով օրացույցից՝ պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

- Այս ամիսը քանի՞ օր ունի:
- Այս տարի նահանջ տարի՞ է, թե՞ ոչ:
- Անցած ամսվա 7-ը շաբաթվա ի՞նչ օր էր:
- Եկող ամսվա առաջին կիրակին ամսի քանի՞սը կլինի:



- Անցած ամիսը քանի՞ չորեքշաբթի ունենք:
- Տարվա ո՞ր ամիսն է հիմա, ամսի քանի՞սն է և շաբաթվա ի՞նչ օր է այսօր:



Գիտե՞ս, ինչպես կարող ես իմանալ, թե որ ամիսը քանի օր ունի, եթե ձեռքիդ տակ օրացույց չկա: Ձեռքերդ բռունցք արա: Ձախ ձեռքի ճկույթի մատնահիմքի ոսկրից սկսիր հաշվել ամիսները: Եթե հաշվելիս ամիսն ընկնում է ոսկրիկի վրա՝ այդ ամիսը 31 օր ունի, իսկ եթե փոսիկի՝ 30 կամ պակաս (փետրվար):



- Լավ մտածի՛ր՝ տարվա ամիսներից քանի՞սը 28 օր ունեն:







Ուշադիր կարդա՛ ցուցումները և պատրաստիր օրացույց, որը չի հնանում.




1.



- Ստվարաթղթից երեք միանման շրջաններ կտրիր:
- Շրջաններից մեկի եզրով գրիր 1-ից 31 թվերը:
- Երկրորդ շրջանին՝ եզրով, իրարից հավասար հեռավորության վրա գրիր տարվա 12 ամիսները:
- Երրորդ շրջանի եզրով գրիր շաբաթվա օրերը:



2.



- Ստվարաթղթից ուղղանկյունի կտրիր:
- Ամիսներով և շաբաթվա օրերով շրջանների կենտրոնում անցք արա և բարակ մետաղալարով փակցրու ուղղանկյունու վրա՝ ինչպես ցույց է տրված նկարում:
- Մետաղալարերի ծայրերը ծալիր, որ շրջանները դուրս չգան:

3.




- Առաջինից ավելի փոքր ևս մեկ ուղղանկյունի կտրիր, այնպես, որ առաջին ուղղանկյունու վրա տեղադրելով՝ շրջանները ծածկվեն:
- Ամսաթվերով շրջանը սոսնձիր ուղղանկյունու վրա, այլ գույնի թղթից սլաք պատրաստիր և մետաղալարով ամրացրեք շրջանի կենտրոնում:

- Ուղղանկյունու վերին և ստորին եզրերի մեջտեղի մասից կիսալուսնի ձևով կտրիր-հեռացրու թուղթը՝ ինչպես ցույց է տրված նկարում:



4.




- Փոքր ուղղանկյունին անկյուններից ստանձիր մեծ ուղղանկյունու վրա:
- Մեծ ուղղանկյունու վերին ծայրերին թել ամրացրու՝ որպես կախիչ:
- Ամսաթիվը, շաբաթվա օրն ու ամիսը փոփոխիր ըստ պահանջի:

Օրացույցը կարող ես նկարագարել:



ԻՆՉՊԵՍ ԶԳՈՒՇԱՆԱԼ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ



1. Լսե՛ք Տիգրանիկի պատմությունը և ամեն անգամ, երբ նա վտանգավոր բան է անում, ծափ տվե՛ք: Բացատրե՛ք, թե ինչու է արարքը վտանգավոր:

ՓՈՐՁԱՆԶ ՏԻԳՐԱՆԻԿԸ

Առավոտ էր: Փողոցը լի էր մարդկանցով, և բոլորն աշխատանքի էին շտապում: Տիգրանիկն անցորդներին հրմշտելով առաջ նետվեց, որ դիմացի մայթն անցնի: Հետո՞ ինչ, որ լուսակրի կարմիր լույսը վառվեց. ինքը շտապում էր... Քիչ մնաց՝ մի հսկա բեռնատարի տակ ընկներ: Բեռնատարն արգելակեց, ու Տիգրանիկը մի կերպ փախավ, հասավ կանգառ: Վազեց, ցատկեց ավտոբուսի ոտնակին, բայց ավտոբուսը շարժվեց: Տիգրանիկը, հավասարակշռությունը կորցնելով, թրմփաց ցած... Դեռ բախտը բերեց, որ հետևից մեքենա չէր գալիս:


«Լավ, ոտքով կհասնեն», - մտածեց Տիգրանիկն ու քայլեց փողոցով: Մի բաց դռնակ տեսավ, որից ինչ-որ լարեր էին կախված: Վարպետները հոսանքալարերն էին նորոգում ու մի

պահ անգգուշաբար թողել, հեռացել էին... Ուզեց քաշել, պոկել՝
պետք կգան: Բարեբախտաբար մի պապիկ արագ հասավ ու հետ
քաշեց:

Մի փոքր ուշացած դպրոց հասավ:

Ջանգը տվեց, ու Տիգրանիկը շտա-
պեց բուժետ: Առավոտյան չէր հասցրել
նախաճաշել, ու փորը սովից վեց-վեց էր
անում: Հեծնեց բազրիքին, ցած սահեց
ու... ոտքը փուշ մտավ: Վա՛յ, ոնց էր
մրմռում: Մի կերպ, կաղալով, հասավ
բուժետ, չամիչով բուլկի առավ ու
սկսեց արագ ուտել, քանի զանգը չէր
տվել: Շտապելուց պատառը շնչափողը
թռավ: Քիչ էր մնում խեղդվեր: Ջանգը
հնչեց: Տիգրանիկն շտապեց ֆիզկուլտի
դահլիճ, բայց վազելիս ոտքը սահեց...

Մի քանի օրից արձակուրդ սկսվեց:
Ավա՛ղ, Տիգրանիկը, ծեռքը գիպսի մեջ,
ստիպված էր նստել տանն ու տխուր-
տրտում նայել, թե ընկերներն ինչպես
են խաղում բակում ...





2. Չար Աղետիկը խառնել է նախադասությունները, որպեսզի երեխաները չկարողանան սովորել անվտանգության կանոնները:

Կօզմեոօք վերականգնել դրանք:

Չի կարելի ձեռք մի տվեք: և

զանգեք 1-01:

հանեք էլեկտրական ժամանակ

վրա չի կարելի ջուր լցնել:

դեպքում անջատեք

էլեկտրական մոտենալ

սարքերի այրվելու գետին::

Գետը մոտեցեք միայն

կամրջով

Մի անցեք: վարարած

լարերի

Անծանոթ առարկաներ կամ

դիպչել մի վերցրեք,

Կայծակի արագ դուրս

մի թաքնվեք

ապահովիչը: մետաղյա իրերը:

կամ

Կայծակի բաց լարերին:

մետաղյա ծածկերի

Հրդեհի

ծառերի տակ:

ժամանակ

ժամանակ

եկեք բաց տեղ

ծեգ մոտ եղած



Պատահարներ



1. Գետը

վարարել էր, բայց
կամուրջը հեռու էր, և
Ռուբենը փորձեց մյուս ափն
անցնել: Մեկ էլ ջրի հոսանքը
մրան վայր գցեց ու քիչ էր մնում՝
տաներ...

2. Սաթենիկն ինչ-որ
անժանոթ, անհասկանալի,
մետաղյա տուփի պես
բան տեսավ: Այն է՝ ուզում
էր վերցնել, երբ ընկերները
վրա հասան ու զգուշացրին,
որ ձեռք չտա՝ ալկան է...





3. Նույն վարդակից մի քանի սարքեր էին միացված: Վարդակը բոցավառվեց: Միքայելը վազեց ջուր բերելու, որ կրակը հանգցնի: Լավ է՝ այդ պահին հայրիկը վրա հասավ...



4. Սուրենը դրսում էր, երբ ամպրոպ սկսվեց: Հեռվում մի հսկա կաղնի տեսավ և վազեց, որ անձրևից պաշտպանվի: Բարեբախտաբար դեռ հեռու էր, երբ կայծակը հարվածեց ծառին...



3. Ներկայացված իրավիճակների համար կազմե՞ք կանոններ, որոնք կօգնեն խուսափել վտանգից:

Օրինակ. **Իրավիճակ 1**
Կանոն 1. Գետն անցնել միայն կամրջով:
Կանոն 2. Վարարած գետի ափերից հեռու մնալ:

4. Անվտանգության կանոններով «Ինչպես խուսափենք վտանգներից» պաստառ պատրաստեք:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԵՐԿՐԱԶԱՐԺԻ ԴԵՊՈՒՄ



- Ի՞նչ գիտենք երկրաշարժի մասին:

ԵՐԿՐԱԶԱՐԺ

Երկրաշարժի ժամանակ երկրի կեղևն սկսում է ցնցվել, և եթե ցնցումներն ուժեղ են, դրանք կարող են մույնիսկ շենքեր քանդել: Այն վայրերում, ուր երկրաշարժներն ավելի հաճախ են լինում, շենքերը կառուցում են հատուկ ձևով, որ դիմանան ցնցումներին: Սակայն շատ կարևոր է իմանալ, թե ինչպես պետք է պաշտպանվել երկրաշարժի ժամանակ: Դա, իհարկե, կախված է այն բանից, թե մարդ որտեղ է գտնվում, երբ երկրաշարժ է սկսվում: Եթե շենքի ներսում եք և չեք հասցնի արագ դուրս գալ, ճիշտ կլինի թաքնվել որևէ ամուր կահույքի տակ, որպեսզի ընկնող իրերը ձեզ չվնասեն: Իսկ եթե դրսում եք, պիտի աշխատեք գնալ բաց տեղ՝ կառույցներից, ծառերից և հոսանքալարերից հեռու:



1.

Գտի՛ր նկարներին համապատասխան նախադասությունները:

- 4ա) Նախապես ծնողների հետ հանդիպման վայր որոշե՛ք::
- 7բ) Հեռու՝ մնա չամրակցված կահույքից:
- 5գ) Ոչ մի դեպքում չենք մի՛ մտիր:
- 8դ) Մտի՛ր սեղանի տակ:
- 9ե) Անմիջապես դուրս արի շենքի ստորին հարկերից:
- 2զ) Հեռու՝ մնա շենքերից:
- 6է) Կանգնի՛ր հիմնական պատերի դռան բացվածքում:
- 10) Շենքում մնալու դեպքում կանգնի՛ր ներքին կրող սյու-
ների մոտ և հիմնական պատերով կազմված անկյուն-
ներում:
- 1թ) Երկրաշարժի ժամանակ խուճապի մի՛ մատնվիր:
- 3ժ) Հեռու՝ մնա արտաքին պատերից և պատուհաններից:

1



2



3



4



5



6



7




8



9



10





2.

Կանոն-նախադասություններով «Ինչպես պաշտպանվել երկրաշարժի դեպքում» վերնագրով պաստառ պատրաստեք և փակցրեք դասարանի պատին:



3.

Ուսուցչի հետ պարզեք, թե որոնք են ձեր դասարանի ներքին կրող սյուները կամ հիմնական պատերը:



ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՊՐԱՆՔ

Տանը ծնողների օգնությամբ պարզեք, թե որոնք են ձեր տան ապահով տեղերը, ներսի կրող սյուները կամ հիմնական պատերը:



ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ



Հագարավոր տարիներ առաջ մարդիկ պատմություններ էին հորինում՝ փորձելով բացատրություններ գտնել իրենց շուրջ կատարվող երևույթների համար: Այդ պատմությունները կոչվում են **առասպելներ**:

Հին հույները հավատում էին, թե Ատլանտ անունով մի հսկա Երկիրը պահում է իր ուսերին: Եթե ուսերը թոթվեր, Երկրի վրա **երկրաշարժ** կլիներ:



Ամերիկայի
հնդկացիները
կարծում էին, թե
աշխարհը հենված է
7 ծովային
կրիաների մեջքին:
Եթե այս կրիաներից
մեկը հոգնում էր ու
փորձում դիրքը
փոխել, **երկրաշարժ**
էր առաջանում:



Մեկ այլ
հունական առաս-
պել պատմում է, որ
երբ ծովերի
աստված Պոսեյ-
դոնը զայրանում էր
և իր գավազանը
խփում ծովի հա-
տակին, **փոթորիկ**
էր առաջանում:



Մեքսիկայի բնիկները՝ ացտեկները, կարծում էին, թե աստվածները, զայրանալով իսպանացի նվաճողների վրա, այնպես էին անում, որ իրենց Պոպոկատեպետի սարից **հրաբուխ** ժայթքի:



- Ինչու՞ են բնության որոշ երևույթներ աղետ կոչվում: Բնական ի՞նչ աղետներ կարող եք թվարկել:



Աղետ է կոչվում այն երևույթը, որի պատճառով մարդկային զոհեր են լինում, և մեծ վնաս է հասցվում շրջակա միջավայրին:



1. Աղետի ժամանակ մարդիկ հաճախ ստիպված են լինում հեռանալ տներից: Ձեր կարծիքով՝ նրանք առաջին հերթին իրենց հետ ի՞նչ պիտի վերցնեն: Միասին «աղետի կապոցի» ցանկ կազմեք:
- Համեմատեք մյուս ընկերների կազմած ցանկերի հետ: Համեմատեք դասագրքում տրված ցանկի հետ:



- Ձեր ընտրած իրերն արդյոք բոլո՞ր աղետների դեպքում են պիտանի:
- Ինչու՞ պետք չէ, որ այդ ցանկը մեծ լինի:

ԱՂԵՏԻ ԿԱՊՈՑ



Դեղորայք և
վիրակապական մյուսքեր


Կարևոր
փաստաթղթեր





Ռադիոընդունիչ

Գրպանի լապտեր և
մարտկոցներ



Տաք հագուստ
կամ ծածկոց





2. Կարդացե՛ք կանոնները և միասին խաղացե՛ք:

ՕԳՆԵՆԶ ԳՈՅԱՐԻԿԻՆ

ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Յուրաքանչյուրն սկսում է առաջին վանդակից՝ իր խաղաքարով: Խաղն ընթանում է ժամացույցի սլաքի ուղղությամբ, զառի թվին համապատասխան վանդակներով առաջ շարժվելով:

Այն խաղացողը, որն առաջինն է կենտրոն հասնում և «փրկում է» Գոհարիկին, հաղթող է ճանաչվում: Եթե զառի թիվը կենտրոն հասնելու համար անհրաժեշտ թվից մեծ է, միևնույն է, խաղացողը հաղթող է ճանաչվում:



Օգնութեան Վանդակներ



- Եթե ընկնում եք Գոհարիկին պատկերող վանդակը, պարագայի քարտ վերցրե՛ք կամ նորից գառ գցե՛ք:

Խանգավորող Վանդակներ




Կայծակ

- Եթե կայծակ պատկերող վանդակն եք ընկել, վերադարձե՛ք սկիզբ և նորից սկսե՛ք:



Սև վանդակ

- Երկու հերթ բա՛ց թողե՛ք կամ պարագաների կույտ վերադարձրե՛ք լրացուցները:



Կոտրած լուսամուտ

- Երկու հերթ բա՛ց թողե՛ք կամ պարագաների կույտ վերադարձրե՛ք տաք հագուստը:



Բազմակի աղետների վանդակներ

- Հրահանգի քարտ վերցրե՛ք, կատարե՛ք հրահանգը, այնուհետև քարտը վերադարձրե՛ք կույտ՝ դնելով կույտի տակ:



Մեկ աղետի վանդակներ

- Մեկ հերթ բա՛ց թողե՛ք կամ պարագաների 2 քարտ վերադարձրե՛ք կույտ:

Մնացած վանդակները

- Կանգնե՛ք վանդակում և սպասե՛ք ձեր հերթին:

ՀՐԱՅԱՆՔՆԵՐԻ ԶԱՐՏԵՐ

Եթե թվարկեք աղետի կապոցից 5 առարկա՝
նորից զառ գցե՛ք: Եթե ոչ՝ հերթը բա՛ց թողեք:

Գետը վարարել է, և նկուղը ջուր է լցվել:
Գնացե՛ք 15-րդ վանդակը:

Դրսում եք, և փոթորիկ է սկսվում: Պառկե՛ք,
գլուխը ծածկե՛ք և մեկ հերթ բա՛ց թողեք:

Երկրաշարժ է՝ սենյակը ցնցվում է: Գնացե՛ք
11-րդ վանդակը:

Երկրաշարժ է: Տնեցիների հետ հանդիպման
վայր որոշեք: Գնացե՛ք 34-րդ վանդակը և մեկ
հերթ բա՛ց թողեք:

Լապտերի մարտկոցները հիմ եմ: Լապտերով
քարտ վերցրե՛ք, կամ 3 քայլ հե՛տ գնացեք:




Խաղատախտակից դուրս գրիր այն կանոնները, որոնք պետք է հիշես երկրաշարժի, ջրհեղեղի, փոթորիկի ժամանակ վտանգից պաշտպանվելու համար:







- Ո՞րն է Երկրին ամենամոտ աստղը:
- Երկիրն իր առանցքի շուրջը քանի՞ պտույտ կկատարի մեկ շաբաթում:
- Ո՞ր մոլորակների տարին է Երկրի տարվանից ավելի կարճ:



- Երբ հինգերորդ դասարանում լինես, քո կյանքում Երկիրը քանի՞ պտույտ կատարած կլինի Արեգակի շուրջը:
- Ո՞րն է Երկրի արբանյակը:



- Գտնք սխալը և բացատրեք, թե ինչու չի կարող այդպես լինել:
- Ինչու՞, երբ Երկրագնդի վրա մի տեղ ձմեռ է, մեկ ուրիշ տեղ ամառ է:
- Բնության ի՞նչ երևույթներ գիտեք: Թվարկեք:
- Ինչպե՞ս է եղանակի մասին իմանալն օգնում պահպանել առողջությունը, խնամել բույսերն ու կենդանիներին:



ՀԱՆԵԼ ՈՒ ԿՆԵՐ

1 Ոչ վրձին ունի, ոչ ներկեր ունի,
Աշխարհը ներկում է նա հազար գույնի:

2 Գալիս է փաթիլ-փաթիլ ուրախ պարելով,
Գնում է կաթիլ-կաթիլ արցունք թափելով:

3 Թռվռում է՝ թիթեռ չի,
Իջավ՝ էլ վեր չի թռչի:

4 Սև հրեշը եկավ՝ գոռաց զայրացած
Ու վերևից սպիտակ քարեր թափեց ցած:

5 Սև ծածկոցը թափ տվեց,
Ճերմակ սիսեռ ցած թափեց:
Խոտ ու ծաղիկ, միրգ ու հատիկ,
Որը ջարդվեց, որը դաղվեց:

6 Ճերմակ է ներկում դաշտ ու սարը,
Վերմակով ծածկում արար աշխարհը:

7 Առանց մաղի կմաղվեմ,
Հողերի հետ կշաղվեմ,
Գետնի խորքում կթաղվեմ,
Ծառ ու ծաղկին կյանք կտամ,
Նոր միայն կխաղաղվեմ:


8 Բերան չունի՝ փչում է,
Մտրակ չունի՝ շաչում է,
Ձեռքեր չունի՝ հրում է,
Բեռնակիր չէ՝ կրում է,
Ոչ տուն ունի, ոչ էլ տեր,
Այստեղ է ու ամեն տեղ:

9 Կայտառացավ առուն սարուն,
Աշխուժացավ խեժը ծառուն:
Շատ սպասված ո՞վ է գալիս՝
Աշխարհը ծաղկով զարդարուն:

10 Թե նա չգար՝ հովը՝ հով, ծովը՝ ծով չէր լինելու,
Սարը այնքան ցանկալի, ապահով չէր լինելու:

11 Այն ի՞նչ կամար է՝ շքեղ, գունգգույն,
Ծայրերը հողին, ինքը երկնքում:
Բոլորս ենք նրա տեսքով հիացել,
Սակայն տակով
Երբեք ոչ ոք չի անցել:

1-աշուն, 2,3-ձյուն, 4,5-կալիստ, 6-ձմեռ, 7-ամռն, 8-քամի, 9-գարուն, 10-ամառ, 11-ծառ



ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ՊԻՏԱԿԸ
(առակ)

Ահեղ Առյուծը քնից արթնացավ ու սարսափեց. ինչ-որ մեկը, երևի կատակել ցանկանալով, պոչին պիտակ էր կացրել՝ վրան գրված՝ «Ավանակ»: Ինչպե՞ս ազատվեր պիտակից: Որոշեց գազաններից օգնություն խնդրել:

«Բոլորդ էլ գիտեք, որ ես Առյուծն եմ, չէ՞», - հարցրեց նրանց:

«Մենք գիտենք, որ Առյուծն ես, - ասաց Բորենին, - բայց մյուս կողմից՝ եթե վրադ գրված է, որ Ավանակ ես, ուրեմն մի բան կա»:

«Ո՞նց թե, - վրդովվեց Առյուծը, - ախր ե՞րբ եք տեսել, որ ես խոտ ուտեմ»:

«Տեսքից Առյուծի նման ես, - ասաց Աղվեսը, - բայց ի՞նչ իմանանք»:

«Այ Ավանակ, - դիմեց Առյուծն էշին, - գոնե դու ասա՝ ես ախոռու՞մ եմ ապրում»:

Ավանակը մտքի մեջ ընկավ, հետո ասաց. «Դեռ Ավանակ չես դարձել, իհարկե, բայց արդեն, կարծես, Առյուծ էլ չես»:

Առյուծը շատ խնդրեց, շատ համոզեց, շատ արդարացավ, փորձեց բացատրել: Նրան խղճացին, բայց պիտակն այդպես էլ ոչ ոք չհանեց: Շուտով հյուծվեց, ուժը կորցրեց, սկսեց բոլորից խուսափել, բոլորին ճանապարհ տալ, տեղը զիջել: Մի օր էլ գազանները նրա որջից լսեցին. «Ի՛ - ա ա՛»:

Առակն ի՞նչ է ուզում ասել. որ պիտակը հաճախ կարող է Առյուծից էլ ուժեղ լինել:

Ս. Միխալկով

ՉՈՐՍ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ձմեռ էր: Արամը ձնագնդի խաղաց, սահնակով սղղաց, կարմրած տուն եկավ և ասաց հորը. «Հայրի՛կ, ի՞նչ լավ եղանակ է ձմեռը, ես կուզենայի, որ միշտ ձմեռ լիներ»:

Հայրիկը Արամի այս ցանկությունը գրեց ծոցատետրում:



Եկավ գարունը: Արամը վազվզեց գույնզգույն թիթեռների հետևից, ծաղիկներ քաղեց, ուրախ-ուրախ տուն եկավ և ասաց



հորը, «Ի՞նչ հրաշալի եղանակ է գարունը: Ես կուզենայի, որ միշտ գարուն լիներ»:

Արամի այս ցանկությունն էլ հայրիկը գրեց իր ծոցատետրում:

Եկավ ամառը: Արամը հայրիկի հետ դաշտ գնաց, հատապտուղ հավաքեց, հոտավետ խոտերի վրա թավալվեց: Երեկոյան տուն դարձավ ու ասաց հորը. «Ես կուզենայի, որ ամառը վերջ չունենաց»:

Հայրիկն Արամի այս ցանկությունն էլ գրեց իր ծոցատետրում:



Վրա հասավ աշունը: Այգում հավաքեցին վարդագույն խնձորները, դեղին տանձերը: Արամը հիացած տուն եկավ ու ասաց հորը. «Աշունը բոլոր եղանակներից լավն է»:

Այդ ժամանակ հայրիկն իր ծոցատետրը բացեց և ցույց տվեց Արամին, որ նա միևնույն բանն է ասել և՛ ծմռան, և՛ գարնան, և՛ ամռան, և՛ աշնան մասին:

Կ Ուշիճսկի



ՉՄԵՐ



- Ալևոր եմ սպիտակ,
Բերում եմ բուր ու սահմակ,
Կարմիր ներկում թուշ, երես:
Ասեք տեսնեմ՝ ո՞վ եմ ես:



- Դու ձմեռն ես ցրտաբեր,
Փռում ես տաք վերմակներ,
Որ արմատը բույսերի
Ցրտից, քամուց չսառչի:



3. Հայրապետյան



ԿԱՏԱԿՆԵՐ

1. Մաթեմատիկայի դասին Ուսուցչուհին հարցրեց.
 - Ո՞վ կարող է ասել՝ ո՞րն է շատ՝ երկու 50 դրամանոցը, թե՞ մեկ 100 դրամանոցը:
 - Երկու 50 դրամանոցը,- տեղից պատասխանեց Լուսինեն,- եթե մի 100 դրամանոցը կորցնեմ, փող չեմ ունենա, իսկ եթե մի 50 դրամանոցը կորցնեմ, դեռ 50 դրամ կմնա:

2. Տիգրանը գլխիկոր մոտեցավ Անիին ու վախվխելով հարցրեց.

- Ի՞նչ ես կարծում, եթե մի բանի տեղը գիտես, կարո՞ղ ես ասել, թե այն կորել է:

- Իհարկե ոչ, - վստահ պատասխանեց Անին:

- Լավ է, ուրեմն՝ քո նոր օդապարիկը չի կորել, որովհետև ես հաստատ գիտեմ, թե որտեղ է՝ երկնքում,- թեթևացած շունչ քաշեց Տիգրանը:

3. Մի օր Ուսուցչուհին մի նշանավոր լողորդի մասին էր պատմում:

- Գիտե՞ք, որ նա սովորություն ուներ ամեն առավոտ՝ նախաճաշից առաջ, 3 անգամ գետի մի ափից մյուսը լողալ:

Հանկարծ լսվեց Տիգրանի բարձրաձայն ծիծաղը:

- Ի՞նչ է, չե՞ս հավատում, որ լավ լողորդը կարող է այդքան լողալ,- հարցրեց Ուսուցչուհին:

- Հավատալը՝ հավատում եմ, - պատասխանեց Տիգրանը,- ուղղակի չեմ հասկանում՝ այդքանից հետո ինչու՞ 4-րդ անգամն էլ չէր լողում, որ վերադառնար այն ափը, ուր շորերն էր թողել:



4. Մի օր երեխաները քաղաքից դուրս էքսկուրսիա էին գնացել: Անին ու Գրիգորը մի այգի տեսան, ուր բոլոր ծառերին խնձորներ կային, բացի մեկից: Ջարմացած, սկսեցին վիճել, թե՞ տեսնես ի՞նչն էր պատճառը: Այդ պահին նրանց մոտեցավ Կարենը: Երեխաները խոստացան իրենց բաժին կարկանդակը նրան տալ, եթե բացատրի այդ տարօրինակ երևույթի պատճառը: Կարենը վերցրեց կարկանդակները, մինչև վերջին փշուրն ախորժակով կերավ, ապա ասաց.

- Հասկանո՞ւմ եք, բանն այն է, որ մյուս բոլոր ծառերը խնձորենի են, իսկ այս մեկը՝ կաղնի:

5. Մի օր գրականության դասին Ուսուցչուհին հարցրեց.

- Ո՞վ կարող է ասել, ո՞ր հայ հեքիաթագրի մասին ենք այսօր խոսելու:

- Ղազարոս Աղայանի, - ասաց Տիգրանը:

- Իսկ կարո՞ղ ես ասել նրա ծննդյան և մահվան տարեթվերը:

- Չգիտեմ:

- Երևում է, որ դասդ չես կարդացել, թե չէ տեսած կլինեիր. հենց առաջին տողում գրված է:

- Հա՛, - բացականչեց Տիգրանը, - ես էլ կարծում էի՝ դա նրա բջջային հեռախոսի համարն է:



6. Մի օր առավոտյան մեր բակի Քուչոն գրոսանքի է գնում, բայց նախորդ օրը նվեր ստացած կոնֆետը թողնում է իր բնում, կողքն էլ՝ մի գրություն. «Այս կոնֆետի տերը կարող է սուր ատամներով գողին բզիկ-բզիկ անել: Ես վերադառնալու եմ»:

Հետ գալով՝ տեսնում է, որ կոնֆետը չկա, փոխարենը կաչաղակի ճանկերով խզբզած մի ուրիշ գրություն է թողած. «Այս գրության հեղինակը կարող է մեկ ժամում 40 կիլոմետր թռչել: Ես չեմ վերադառնալու»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1

ԵՍ ԵՎ ԻՄ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ.....	3
ԴԱՍ 1 ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ.....	3
ԴԱՍ 2 ԻՍԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԸ.....	8
ԴԱՍ 3 ԻՆՉ Է ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ.....	11
ԴԱՍ 4 ՀԱՍԿԱՆԱԼ ԴԻՄԱՅԻՆԻՆ.....	14
ԴԱՍ 5 ԱՐԱՐԶ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ.....	19

ԹԵՄԱ 2

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԻՄ ԿՅԱՆՔԸ.....	23
ԴԱՍ 1 ԻՄ ՀԵՏԱԶԵՐԺՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	23
ԴԱՍ 2 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԺԱՄԱՆՑ.....	27
ԴԱՍ 3 ԻՄ ԱՌՕՐՅԱՆ.....	31
ԴԱՍ 4 ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼ, ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԳՏՆԵԼ.....	33

ԹԵՄԱ 3

ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.....	39
ԴԱՍ 1 ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ.....	39
ԴԱՍ 2 ԻՆՉԻՑ ԵՆՔ ԿԱՌՈՒՅՎԱԾ.....	42
ԴԱՍ 3 ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՀԵՆԱՐԱՆԸ.....	45
ԴԱՍ 4 ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ.....	49
ԴԱՍ 5 ՄԵՋ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՈՒՂԵՂԸ.....	52
ԴԱՍ 6 ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ.....	57
ԴԱՍ 7 ՀԱՄ ՈՒ ՀՈՏ.....	61
ԴԱՍ 9 ՄԱՇԿԸ.....	66

ԴԱՍ 9	ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ	70
ԴԱՍ 10	ԿՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	76
ԴԱՍ 11	ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՅ	79

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ	84
-------------------	----

ԹԵՄԱ 4

ԵՐԿԻՐ ՄՈՒԼՈՐԱԿԸ	87
-----------------------	----

ԴԱՍ 1	ԵՐԿՆՔՈՒՄ ՄԻ ԱԿԱՋԱՀԱՏԻԿ	87
ԴԱՍ 2	ԵՐԿԻՐՆ ՈՒ ԼՈՒՄՆԵՆ	90

ԹԵՄԱ 5

ՏԱՐԿԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	95
------------------------	----

ԴԱՍ 1	ԵՂԱՆԱԿԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ	95
ԴԱՍ 2	ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ	99
ԴԱՍ 3	ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ	103
ԴԱՍ 4	ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ	110
ԴԱՍ 5	ՏԱՐԿԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԸ	115
ԴԱՍ 6	ՏԱՐԻ, ԱՄԻՍՆԵՐ, ՀԱԲԱԹՎԱ ՕՐԵՐ ԵՎ ՕՐԱՅՈՒՅՑ	120



ԹԵՄԱ 6

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ

ՇՐՋԱՊԱՏՈՒՄ127

ԴԱՍ 1 ԻՆՉՊԵՍ ԶԳՈՒՇԱՆԱԼ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ127

ԴԱՍ 2 ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ
ԴԵՊՔՈՒՄ133

ԴԱՍ 3 ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ137

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ147

ՀԱՎԵԼՎԱԾ

151

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ՊԻՏԱԿԸ151

ԶՈՐՍ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ152

ԿԱՏԱԿՆԵՐ154



ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՆՈՒՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Հանրակրթական դպրոցի
3-րդ դասարանի դասագիրք

Հրատարակիչ տնօրեն	ՍՈՒՐԵՆ ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ
Նկարիչներ	ԱՐՄԻՆԵ ՇԱՀԻՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Համակարգչային ծնավորող	ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Սրբագրիչ	ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՐ»
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
(Երևան, Գ. Քոչար 21)

Տպագրված է «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ում



ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ